

N 65.

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈԼԱՐ ԵՐԿՐՈՒԹԻՒՄ ՄԻԱՅԻ

Հ. Ա. Խ. Հ.



ԲԱՆԱԿՈՐՆԵՐԻ, ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԵՒ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱ-  
ՑԻՆՆԵՐԻ ԽՈՐՉՈՒՐԴՆԵՐԻ Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԵՐԵՒԱՆ 1922 թ.



Ա Զ Հ  
117

II  
11463

300  
1431-24

## Հ. Խ. Հ.

Բանառների Գիւղացիների և Կարմիր Բանակայինների  
ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԻ Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

## Ա. Ն Ի Ս

### ՀԱՅԻ ԱՌԱՋ ԲԱՑՈՒՄ

1922 թ. յուն. 20, Երկուամբի

Երեսնի պետական թատրոնի սրահում, երեկոյեան ժամի  
օ և կէսին կայացաւ Հ. Խ. Հ. Բանառների, Գիւղացիների և  
Կարճիր Բանակայինների Խորհուրդների անդրանիկ համագու-  
մարը՝ մասնակցութեամբ 250 պատզամաւորների: Բնմի վրայ  
տեղ էին բանել Ժողովրդական Կոմիսարները: Դահլիճը լիքն էր  
պատզամաւորներով և հրաւիրած բանառներով ու խորհրդային  
աշխատողներով: Ներկայ էին նոյնակա Տաճկաստանի, Պարսկաս-  
տանի, Ամերիկան Օգնութեան Կոմիտէի Ներկայացուցիչները և  
Պօլսի Հայաստանի Օգնութեան Միութեան երեսն եկան ան-  
դամները:

Համագումարը բացեց Ժողովրդական Կոմիսարների նախա-  
դան ընկ Ա. Մեանիկեանը:

## ԸՆԿԵՐ ՄԵԱՍՆԻԿԵԱՆԻ ՀԱՌԸ

Ընկերներ, Հայաստանի սօցիալիստական խորհրդային հան-  
րապետութեան Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անունից  
Հայաստանի Բանառների, Գիւղացիների և Կարճիր Բանակային-  
ների Խորհուրդների անդրանիկ Համագումարը համարում եմ  
բացւած, (Զերմ և բուռն ծափեր յունկայս երկարատև ովացիա-  
ներ): Ըստ կանոնադրութեան՝ պատզամաւորների թիւը պիտի  
լինէր 260, և, քանի որ, Հայաստանի զանազան մասերից արգէն  
ներկայ են արտեղ 250 ընտրւած պատզամաւորներ, հետեւը ար-  
տյու համագումարը միանդամայն օրինաւոր Համագումար պիտի

Ընկեր Մեասնիկեանը բացման նոյն խօսքերը կրկնեց նաև  
այսկոքնով, ապա երաժշտախումբը մասնակցութեամբ երգեցիկ



(117 - Ա 9-2)

11-11463 ան

խմբի՝ նւազեց «Ինտերնացիօնալը», որ ներկաները ունվագրեցին յոտնկայս: ) Ընկեր Մեասնիկեանը շարունակեց: —

Ընկերներ, մեր անդրանիկ համագումարը հաւաքւում է մի տարուց յետոյ այն ժամանակից՝ երբ այստեղ նախկին բուժութուական Հայաստանում, ոտք է դնում բանւորութիւնն ու գիւղացիութիւնը, որպէս արդէն տիրապետող տարը և հպատակեցնում է այն դասակարգին՝ որ դարեր շարունակ շահագործել էր իրեն: Հայաստանում ներկայումս աշխատաւորութիւնը ունեցել է և ունի միայն մի նպատակ—այս երկրում հաստատել խաղաղութիւն, որպէսզի հնարաւորութիւնն տայ ստեղծելու այն բոլորը՝ ինչ հարկաւոր է մարդկային երջանկութեան համար: Եւ այս մի տարւայ ընթացքում Հայաստանի բանւորութիւնն ու գիւղացիութիւնը, միշտ գտնել են կառավարութեան թիկունքում, նրան ուժ ու կորով են տեսել և երբէք չեն թմբել այն յոյսերով՝ թէ այս երկիրն արդէն խաղաղ է և ապահով որևէ անակնկալից ու արհաւիրքից: Եթէ մենք այսպէս մտածելու լինենք, ամենամանկամիտը կը լինենք: Մենք գիտակցում ենք, որ մեծ զործի ծանրութեան տակ ենք գտնուում, քանի որ մենք տապալեցինք նախկին իշխանութիւնը և երկրի ղեկը մեր ձեռքն առանք: Մենք ականատես եղանք զանսպան ապստամբութիւնների՝ նախկին կառավարութեան, նախկին կեղեքիների կողմից և այդ կոիւների հնոցում մենք կաղմակերպեցինք մեր կարմիր բանակը: Մեզ օգնութեան եկան նաև ուրիշ երկրները՝ որտեղ նոյնպէս տիրում է աշխատաւոր դասակարգի իշխանութիւնը: Մենք արիւն թափեցինք, մեզ ստիպեցին այդ անել, մենք կործանւոծ կը լինեինք եթէ այդ չանչինք: Մենք պիտի պաշտպանէինք այս երկիրը մեր թշնամիների ունագութիւնների դէմ: Եւ այդ ահաւոր կաիւներին մենք զո՞ւ տւինք մեր լաւագոյն ընկերներին, բանւորների և զիւղացիների շարքերից շատ շատերին, որոնք աւաղ, այսօր չեն երեսում, չեն մասնակցում յաղթանակի այս մեծ տօնին: Մենք ծունկ ենք խոնարհում այդ մեծ նահատակների յիշատակի առջև: (Համագումարը յոտնկայս յարգում է զոհերի յիշատակը, երտաշտախումը նւազում է մահերդ): Բայց ընկերներ, այդ զոհերը կատարեցին իրենց գործը. այսօր մենք տեսնում ենք արդէն Հայաստանը որպէս մի ամբողջական երկիր, որ անշեղ և ամուր քայլերով ընթանում է յառաջ, համուշած այն բանում, որ նա կանի իր գործը ինչ էլ լինի, քանի որ իշխանութեան զեկը անսասան կերպով գտնուում է բանւորների և գիւղացիների երկաթէ ձեռքերում: (Յունն ծափեր):

Այսօրւայ Հայաստանում մենք կարողացանք ստեղծել ազգերի համերաշխութիւն, որովհետեւ դա բղխում էր աշխատաւորութեան իդէալից: Հայաստանի աշխատաւորութիւնը պահանջում էր, որ բալոր ազգերի աշխատաւորութեան շարքերում լինի եղայրական կապ: Ահա այդ պահանջի վրայ հիմնած՝ կարմիր

բանակը գուրս վոնդեց մեր թշնամուն: Այժմ Հայաստանի խորհրդային կառավարութիւնը աւելի քան ապահով կարողէ անցնել և արդէն անցել է իր խաղաղ աշխատանքին: Այս աշխատանքի ընթացքում մենք կըտանը նորանոր գուեր. մենք գիտենք այդ, բայց դրա առաջ կանգ չենք առնի, այլապէս մենք չենք կարող մեր խորհրդային իշխանութիւնը կանգուն պահել այս երկրում: միայն դրանով նախկին բուրժուական Հայաստանը կարող է դառնալ աշխատաւորութեան հայրենիք: (Ծափեր): Այս աշխատանքը մենք կը կարողանանք շարունակել՝ եթէ միահամուռ ուժերով ընթանանք յառաջ, յիշենք մեր անցած ճանապարհը, դաս առնենք անցեալից, սեղմենք մեր շարքերը աւելի և աւելի, վարժւենք այդ մեծ և ահարկու աշխատանքին, երաւիրենք մեր կարող ուժերը՝ որտեղից որ նրանք դուրս եկած լինին, միայն թէ ծառայեն աշխատաւորութեան շահերին, Յոնուն այդ բանի՝ մենք երաւիրում ենի մեր ողջ երկիրը աշխատանքի: Կեցցէ այն մեծ աշխատանքը՝ որ կը պահպանի այս երկիրը: (Ծափեր և ովագիւներ): Կեցցէ խորհուրդների անգրանիկ համագումարը: (Որոտնդոստ ծափեր):

(Ընկեր Մեասնիկեանը իր ճառը կրկնեց նաև ոռւսերէնով՝ ուսւ և այլազգի պատգամաւորների համար, ապա երաժշտախումը երգեցիկ խմբի մասնակցութեամբ նուազեց «Ինտերնացիոնալ»: Ընկեր Մեասնիկեանն իր խոսքը շարունակեց ոռւսերէնով. — Ընկերներ. այս հանդիսաւոր տօնի առթիւ պիտի ասեմ նաև, որ նման հանդէս չէր տեսել այս երկիրը, նրա բնակչութիւնը կազմող հայ, թուրք, եղեղի, ասորի, ուսւ ազգերի աշխատաւորութեան ներկայացուցիչներն ալսօր այսաեղ են հաւաքւել իրեն եղբայրներ և բոլոր խողիրները նրանք լուծելու են համերաշխաբար: Այս հանգամանքը բացատրում է նրանով, «ը նրանց հաւաքական շահերը պահանջում են միասին լինել ընդդէմ իրենց թշնամի շահագործող դասակարգի: Կեցցէ Հայաստանի ժողովուրդների աշխատաւորական միութիւնը: (Ճափեր):

Ընկերներ թոյլ տէք անցնելու նախագահութեան ընտրութեան: Խնչ առաջարկներ կան այս առթիւ:

Ընկ. Գր. Մեհրաբեան.— Համագումարի Կոմունիստական Փրակցիայի կողմից նախագահութեան համար առաջարկում եմ հետևեալ թեկնածուները: —

1. Ալ. Մեասնիկեան
2. Ս. Սրապիոնեան (Լուկաշին)
3. Աւիս
4. Ա. Շահզեալդեան
5. Ս. Համբարձումեան
6. Սիմակ
7. Հ. Ազատեան
8. Գր. Վարդանեան

9. Գալուստ Յարութիւնեան

10. Բարիսինկօ
11. Վարդուշ
12. Կարապետ Զանոյեան
13. Իսրայէլ Թուխունց
14. Տուլուսվ
15. Մուսա Հիւսէյին-օզլի

Մրանցից 11-ը հայ են 2-ը ոռու, 1-ը թուրք, 1-ը եղեղի սրա ց թւում 10-ը կոմունիստ, 5 անկուսակցական,

Ընկ. Մեասնիկեան.—Կմն ուրիշ առաջարկները մշ մուրեմ այս ցուցակը համարում եմ ընդունեած և նախագահութիւնը կազմւած, Խնդրում եմ յիշւած ընեերներին իրենց տեղերը բռնել:

Բուռն ծափերի և օվացիոների տակ ընմ են բարձրանում և աեղերը ըռնում նախագահութեան անդամները:

Ընկ. Մենրաբեան.—Խոսք առնելով նոյն ֆրակցեայի կողմէց բարտուղարութեան համար առաջարկում է հետեւեալ թեկնածուներին ընկ. ընկ. 1 Դ. Տէր-Միմօնեան, 2. Կոստանեան Արամ, 3) Պանտելէկ:

Ընկ. Միասնիկեանին թոյլ տւէք բարտուղարութեան թեկնածուներին համարել ընդունեած, ծափերի տակ համագումարի բարտուղարները գրաւում են իրենց տեղերը:

Ընկ. Մենրաբեան.—Մանդանտային կոմիսիայի համար առաջարկում եմ ընկերներ կոստանեան Արամին, Տատեանին և Մէլոյեանին (անկուսակցական), մանդադատային յանձնաժողովը նոյնպէս ընդունում է միուծայն:

Ընկ. Մենրաբեան.—Խմբագրական մարմնի համար բաւական համարելով միան մի հոգու ընտրութիւնը, առաջարկում եմ ընկ Մուաւեանի թեկնածութիւնը, Ընդունում է ծափերով և միաձայն:

Ընկ. Մեասնիկեան.—Մի շարք ընկերներ ողջոյնի համար խօսք են խնդրում: Առաջին խօսքը պատկանում է ընկ. Հ. Ա. ասեանին՝ Երեսնի Խորհուրդի կողմից:

Բուռն ծափերի տակ խօսք է առնում ընկ. Ազատեանը:

Ընկ. Հ. Ազատեան.—Հայաստանի մայրաքաղաքի բանւորների և Կորմիր զինւորների Խորհրդի կողմից Հայաստանի Խորհուրդների այս առաջին համալումարին ջերմ ողջոյն, ընկերներ, դարեր շարունակ մեր երկրում ապրող ժողովուրդները՝ հայ, թուրք, ասորի, եղիղի, ուռու և այլն, բանւորն ու աշխատաւոր գիւղացին զուրկ էին իրենց շրջապատող հարստութիւններից օգտւելու համրարութիւնից, զուրկ նոյն իսկ իրենց Փիզիքական գոյութեան ապահովումից: Ընդամենը մի տարւա ընթացքում կատարեց պատամական մի խոշոր հրաշք, մի խոշոր յեղաշրջում: Ճնորհիւ այն հանգամանքի, որ մեր երկիրը յարչց միջազգային տե-

ռազմէտին, երբ դանակը ոսկրին էր հասել, նա ոչ միայն առապալեց բռնակալ լուծը՝ ոչ միայն հեռացւեց ներքին թշնամին, որ հայ-թուրքական կոտորածներ էր սարքում, ոչ, նա աւելի հեռու գնաց և բարեկամութիւն ստեղծեց հեռու ու մօտ երկիրների ու հարեւանների հետ: Մինչև 1920 թ. նոյեմբեր 29-ը այս երկրի ժողովուրդն ըստ ոչ մի բարեկամ չունէին, իսկ այսօր կարող ենք հպարտութեամբ ասել, որ այս երկիրը բացի մէջակային բուրժաւագիայից ուրիշ ոչ մէ թշնամի չունի, միևնույն ժամանակ ունենալով իր կողմը ըոլուր երկրների բան: որ երին և գիւղացիներին: Բոլոր ներքին և արտաքին թշնամիները, որ կյանդնան մեր վրա ձեռք բարձրացնել, իրենց վաել պատիճը պիտի ստանան: Այսօր մեր երկրի համար ապահոված է իսաղող, շինարար ստեղծագործական կեանքի կատարեալ հնարարաւորութիւնը: Այսօր մեր բանւորները և դիղացիները օգտառում են լիակատար իրաւունքներով որոնք սակայն միջոց են և ոչ նպատակ՝ մեզ շրջապատող նիւթական հարստութիւնները օգտագործելու համար: Մեր առաջգրաւած է երկրի շինարարութեան ծանր հարցը, որ կարող են լուծել այս սրահը լցւած բանւոր գասակարգի և աշխատա: որ գիւղացիութեան ներկայացուցիչները, որոնք մարդկային հասարակութեան մէջ ճանաչում են երկու շերտ՝ աշխատողներ և չաշխատողներ: Այժմ մեզնից է կախւած մեր բանւորների և գիւղացիների նիւթական ապահովման գործը և մենք պէտք է ցոյց տանք, որ իրօք կարող ենք սկսած գործը յաջողութեամբ վերջացնել:

Կեցցեն մեր Խորհուրդները

Կեցցեն մեր բանւորներն ու գիւղացիները, որոնց յաջողւեց կտզմակերպել Խորհուրդների այս համագումարը.

Կեցցէ միջազգային բանւորութիւնը, որի օժանդակութեամբ մեզ յաջողւեց հասնել այս մեծ պատմական օրին (ծափեր):

Ընկ. Մեասնիկեան—խօսք է տրում հայկական Կարմիր Բանակի ներկայացուցիչ ընկ. Բալեանին. ընդունում է ծափերով, որոնք ստանում են ցոյցի կերպարանք. տեղերից կանչեր՝ Շեցցէ կարսիր Բանակի գեկավարը ընկ. Տրոցկին: Տ.

Բալեան.—Ընկերներ, Հայաստանի մանուկ Կարմիր Բանակի կողմից ողջունում եմ Հայաստանի Խորհուրդի 1-ին համագումարը: Հայաստանի Կարմիր Բանակը հաւատացած է, որ միայն Խորհուրդների գոյութեամբ և նրանց միջոցով կապահովուի իրենց ոգեսրող գաղափարների յաղթանակը: Առաջ հին բանկը ոչ մի իրաւունք չունէր որպէս բաղդը տնօրինելու գործում: Այժմ միայն Խորհրդային այս ազատ հանրապետութեան մէջ իրաւունքներ ունինք և մեր բանւորների ու գիւղացիների

Նետ ձեռք-ձեռքի տւած պիտի պաշտպանենք Խորհուրները և Խորհուրդային իշխանութիւնը: Կարմիր բանակը շատ լաւ է գիտակցում իր պարտականութիւնների ծանրութիւնը և մեր բարեկամներին ու թշնամիներին ի զիտութիւն յայտնում ենք, որ ոչ մի ոյժ մեզ չի կարող յաղթել (ծափեր):

Կեցցէ միջաղպային յիղափոխութիւնը.

Կեցցէ Կոմմունիստական Բնատերնացիոնալը (ծափեր, երաժշտախումբը նւագում է «Ինտերնացիոնալ»), ցոյցեր Կարմիր բանակի հասցէին):

Նախագահ ընկ. Մեաննիկեանը համառօտօքէն ոռւսերէն թարգմանում է ընկ. ընկ. Ազատեանի և Բալեանի ճառերը:

Ընկ. Մեաննիկեան.—Խոր է արւում Ռուսաստանի Կարմիր բանակի ներկայացուցիչ Ն բրիգադայի հրամանատարին.

Ընկ. Քօրիսենկօն, ընդունում է երկարատև ծափահարութեամբ և ցոյցերով: Եծաժշտախումբը նւագում է «Ինտերնացիոնալ»:—Ընկերներ, թոյլ աւէք Ռուսաստանի Կարմիր բանակի Հայաստանում գտնուղ զօրամասերի կողմից ողջունել Հայաստանի Խորհրդային հողի տիրոջը՝ Հայաստանի Խորհուրդների Լին համագումարը: Խոր գոհունակութեան զդացումով մենք հեռաց եկած կարմիր զինուրներու տեսնում ենք, որ Հայաստանի ժողովուրդների մրջից անցել չքացել է փոխադար թշնամութիւնը և, որ եղբայրական կարմիր բանակները իրար միացած հնարաւորութիւն են աւել այս երկրի աշխատաւորներին ընտրել իրենց ներկայացուցիչներին իրենց դորձերը կարգաւորելու և առաջ տանելու համար:

Ռուսաստանի Կարմիր բանակի կողմից յայտնում եմ, որ Կարմիր բանակը այսուղի հեկ է Հայաստանի բանուրների, գիւղացիների և աշխատաւոր մտսաների կոչով, և եկել է ոչ թէ երկրին տիրանալու, իրեն ենթարկելու նպատակով, այլ միտյն ձգտում ունի տեղական ուժերին օժանդակելով պահպանել խաղաղութիւն կոմունիստական աշխատանքի և Խորհրդային կարգերի համար: Պաշտպանելով խաղաղութիւնը ներքուստ, Կարմիր բանակը միշտ արթուն կանգնած է և դիտում է, որ գրսից վտանգ չսպառնայ երկրում տիրող խաղաղութեան:

Մենք մեր բոլոր ուժերովը պատրաստ ենք ծտանալ ներքին ու արտաքին բոլոր թշնամիների դէմ և խորտակել նրանց թոյլ չտալով, որ Հայաստանի ժողովուրդների խաղաղ կեանքի պայմանները խախտեն: Համագումարին ցանկանում են լիակատար յաջողութիւն: Ես ինձ շատ երջանիկ եմ զգում, որ բաղդունեմ այսօր այսուղի կոչելու: «Կեցցէ Հայաստանի Խորհրդային նողի տէրը՝ Հայաստանի Խորհուրդների Լին համագումարը»:

Կեցցէ բոլոր երկրների ժողովուրդների եղբայրական միութիւնը (որուտակից ծափեր, նւագ «Ինտերնացիոնալ» տեղից «Կեցցէ Տրոցկին, կեցցէ Մեաննիկեանը»):

Նախագահ.—Խօսքը պատկանում է Երեանի Կենտր. Կոմիտէի միւսիւման Փրակցիայի ներկայացուցիչ ընկ. էֆէնդիկլին: Ընկ. էֆէնդիկլին.—Հայրենակիցներ, Երեանի Կենտր. Կոմիտէի միւսիւման Փրակցիայի կողմից շնորհաւորում եմ Հայաստանի առաջին Կարմիր համագումարը: Մենք գանում ենք, որ պատմական օր է այս կարմիր օրը բոլոր ճնշւածների համար: Մենք հաւատացած ենք, որ բոլոր ճնշւածների միացումով մենք անպայման կյաղթանակներ: Մի բոպէ, մենք վերյիշում ենք անցեալը, որը լի է արիւնու էջորով և անցանկալի դէպքերով, բայց երբ ականատես ենք լինում այսօր այս պատմական կարմիր օրերին, մենք հաւատացած ենք, որ ներկայ Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը իր առողջ քաղաքականութեամբ, մոռացութեան պիտի տայ բոլոր ճնշւածներին արիւնու անցեալը և սերտ համագործակցութեամբ, պիտի յառաջ տանէ ժամանակ ժամանակուրդների արդար զատը: Մենք միւսիւման ճնշւածներս, մոռանում ենք անցեալը, մենք թողնում ենք այդ պատմութեանը և հիացումով եղբայրաբար ձեռք ենք մեկնում Հայաստանի բոլոր ժողովրդներին: Կեցցեն կովկասեան ժողովուրդները, հայ, վրացի, ուռու, միւսիւման և այլն, և նրանց միացումն ու եղբայրութիւնը:

Բոլոր ճնշւած միւսիւմանների կողմից յայտարարում են այսուղի, որ մենք ձեռք ձեռքի տւած կովկասեան միւս ազգութիւնների ճնշւածների հետ, մոռանում ենք դաշնակների և մուսավաթականների կատարած անցեալի աւանտիւրանները և ովերաւած համարաշխութեան զաղափարով երգւում ենք, այլևս արիւն չթափել: (Բուռն ծափեր): Հայրենակիցներ, այս օրանում, այս կարմիր դրօշակների տակ, ներկայ կառավարութեան Կարմիր բանակի ոյժով, մենք հաւատացած ենք, որ անշեղ և անսայթաք յառաջ պիտի գնանք և Կարմիր բանակի միջոցով ձեռք բերած բոլոր դրաւումները պիտի մեր ընկեր պատգամաւորների ուշադրութեանը յանձնենք:

Կեցցէ Խորհրդային Հայաստանը, նրա մանուկ Կարմիր բանակը և կոմունիստական կուսակցութիւնը, որը պիտի ազատ ճնշւած ժողովուրդներին գերութիւնից և ստրկութիւնից: (Բուռն ծափեր):

Նախագահ.—Խօսքը պատկանում է Հայաստանի օգնութեան կոմիտէի անդամ ընկ. Պապովեանին:

Ընկ. Պապովեան.—Ընկ. Մեաննիկեանը իր ճառի առաջին խօսքի մէջ յայտարարեց, որ այս համագումարը ձեռք է մեկնելու այս ժողովրդի բոլոր կմնանակ աշարերին ի մի ձօւլելու: Խորհրդային իշխանութիւնը մինչև այսօր արել է այդ քայլը և այդ պիտով հնարաւորութիւն է տեղ այսօր այդ սրբազն զործին լծւել: Բըրկ փաստ կարելի է յայտնել այսաեղ, Հայաստանի օգնութեան կոմիտէի գործունէութիւնը: Հայաստանի օգնութեան կոմիտէն իբրի այդունին՝ տնկուսակցական է: Զգիտի թագանել

որ այդ ժարմակի մէջ մտնելու առաջին օրից նոյնիսկ եղան մարդիկ, որոնք երերում էին մտնել այդ կողմի մէջ: Բայց օրիկախ պայմանները նրանց պարտադրեցին մտնել այդ կողմի մէջ: Մենք անկուսակցական ինտելիգենտներս, ողջունում ենք այսօրւայ համագումարը: Այսօր, պատկերը փոխել է և այս աշխատաւորական համագումարը Հայաստանի ժողովրդին է: Այս ժողովի էլ է դրութիւնը: Նոյնիսկ ոչ կոմունիստական ինտելիգենցիայի համար բացւել են նոր ճանապարհներ, նոր դորձունէութիւն բացւել է նաև պատասխանատու գործի ճանապարհը: Հայաստանի ներկայ կառավարութիւնը և կուսակցութիւնը թէև մարտական չէ և զէնքի շահիւնովնէտարում աւգութունէւթիւնը, բայց մէծ պիտի ինինը կատարած գործը: Մենք բոլորւնենք այս կառավարութեան շուրջը, մենք պէտք է, որ հաւաքւենք այս ժողովրդի մէջ և եթէ երբէք ունի վտանգ սպառնայ այս աշխատաւոր ժողովրդին, մենք կծառանանք կառավարութեան հետ միասին:

Թոյլ տէք մի արտասովոր երևոյթի վրա կանգ առնել իբրև Հայաստանի օգնութեան կոմիտէի անդամ:

Մենք ունենք Հայաստանի օգնութեան կոմիտէն, որը ունի իր կոլոնիալ քաղաքականութիւն: Հայաստանը ունի գաղութներ: Մենք ունենք կոլոնիաներ, որը պէտք է շահագործեն ք: Մենք շահագործելով, ստրկացնելու միտք չունենք, այլ շղթայազերծ անենք ալդ տնտեսական-առևտրական շղթաները: Այս բոլէիս, մենք այս գահին ում ունենք այդ կոլոնիաների ներկայացուցիչներին, որոնք տէրն են այս երկրին:

Ես շնչառում եմ, որ ոչ միայն այս երկրում, այլև այս երկրից գուրս անկեղծ արտայայտութիւններով ողջոյններ կան, որի համար թոյլ տէք ողջունել Զեգ:

Կեցցէ Հայաստանի Համագումարը:

Նախագահութիւնը ընկ. Մեասնիկիանը յանձնում է ընկ. Արքիս:

Ընկ. Արք. — Խօսքը որում է եղդի պատգամաւորունի ընկ Նուրի-Բարախատին:

Նուրի-Բարախատ. — (եղդի պատգամաւորունի) ընկերներ, եղդիների կողմից ողջունում եմ Հայաստանի Առքուրդների առաջին համագումարը: Սա որպէս առաջին համագումարը Հայաստանում յէիմք պէտք է դնէ իր երկրի բոլոր ժողովուրդերի համակեցութեան: Հայաստանի սովետիզացիայից յետոյ, շոտ պարզ նկատվէ է, թէ ինչպէս այս երկրի կուլտուրայէս յետամնաց ժողովուրդները յառաջանում ու զարգանում են: Ես հաւատացաւ եմ, որ այս համագումարը պէտք է արդարացնէ իր վրա դրած ոյսերը: Այսպիսի հետանկարներով ես կոչում եմ: — Կեցցէ Խորհրդային Հայաստանը, կեցցէ նրա խորհուրդների առաջին համագումարը: (Ճափիր)

Նախագ. (Արք). — Այժմ կնօսի տաճկանայ աշխատաւորութեան կողմից ընկ Գրիգոր Վարդանեանը:

Գ. Վարդանեան. — Այսօր մեծագոյն տօնն է հայ աշխատաւորութեան մէջ և իր գոյութեան ընթացքում հայ աշխատաւորութեան յաղթանակի և հայ բուրժուական յիտադէմ տարրերի պարտութեան տօնն է (Ճափիր): Ընկերներ պիտի ասեմ, որ այսօր ոչ միայն Հայաստանի, այլ և հայ գաղութների աշխատաւորութիւնն ևս մեզ հետ է իր ամբողջ հոգով: Արևմտահայ աշխատաւորութիւնը, որ ամբողջ Շ-ը տարի է, ինչ իմպերիալիստների քաղաքականութեան չնորհիւ ցրւած է աշխարհի զանազան կողմեր, այժմ նրա մացորդներից թւով մօտ 300000 հոգի պահպանել են իրանց գոյութիւնը Խորհրդային երկրներում: Նրա մի մասը տեսնում է, թէ ի՞նչպէս Խորհրդային Հայաստանի գիւղացին ու բանուրբ իրանց կերպուրը բաժանում են իր հետ: Արևմտահայ աշխատաւորութիւնը այսօր հրապարակ է գալիս և առւմ է՝ ով Խորհրդային Խիւանութիւն, ևս պատրաստ եմ և արդէն գիտակցելով յայտնում եմ հրապարակաւ, որ ձեզ հետ եմ և պարտաւորում եմ մարտնչելու ձեզ հետ միասին և բարձր պահելու յեղափոխութեան Կարմիր գրօշակը երկրի թէ ներսուն և գրսում: Նա գիտակցում է, որ իր փրկութիւնը միայն և միմիայն Խորհրդային Խիւանութեան մէջ է: Թոյլ թէք ի սրտէ ողջունելու Հայաստանի բանւորների, զիւղացիների և Կարմիր բանակայինների Խորհրդին, առաջին համագումարը (Ճափիր):

Նախագահ. — Խօսքը պատկանում է Արևեստակցական միութիւնների Խորհրդի նախագահ ընկ Խաչեանին:

Խաչեան. — (Ճափիր) Հայաստանի Արևեստակցական միութիւնների խորհրդի և աշխատաւորական մասսաների կողմից թոյլ թէք ողջունելու այս մէծ տօնը:

Ընկերներ, սրանից մէկ տարի առաջ, այս նոյն դահլիճում արտասանում էին ճառեր, այնպիսի մարդկանց կողմից, որոնք իրենց յայտարարում էին հայ ժողովրդի ու հայ աշխատաւորութեան ներկայացուցիչներ, բայց փաստերը ցոյց էին տալիս, թէ ինչպէս դրանք հալածում ու շահագործում էին այն մասսաներին որի անոնից խօսում էին: Այստեղ ուր պէտք էր իրենց գործի յաղութեան համար, նրանք առանց ազգի խտրութեան հալածում ու կոտորում էին բոլորին: Այսօր բանւորների և Պամանիստական կուսակցութեան յաղթանակով, որ աւանդարան է աշխատաւորութեան, պարտած է այն կառավարութիւնը, որ այլև գոյութիւն չունի: Պիտի Նկատեմ, որ դաշնակների ժամանակ բանւորները չեին կարող տնել այն, ինչ պահանջում էր իրենց դասակարգային շահը: Եւ եթէ նրանք որևէ գործ ոյզ ուղղութեամբ, նրանց տեղը բանան էր ու կախաղանը: Հայաստանի բանակը իրեն են եղել բանւորներով: որից յիտ

նբանք միանալով կարմիր բանակին և նըս հետ ձեռք-ձեռքի տալով, խորտակելուն բանակալ լուծը: Աշխատանքի այս ազատ օրին, ևս ողջունում եմ այս հոդի տիրոջը, բանտորներին, գիւղացիներին ու Կարմիր բանակայիններին ու գոչում է.—Կեցցեն Խորհրդային բոլոր հանրապետութիւնները, կեցցէ Կոմունիստական կուս սկցութեւնը: (ծափեր)

Նախազահ:—Այստեղ բոլոր խօսողները ընդդեցին, որ Հայաստանի բանտորագիւղական մասսաները ապստամբւելով, օգնութեան կանչեցին յեղափոխական Ռուսաստանի կարմիր բանակին, միացեալ ոյժերով խորտակելու ազգային և միջազգային իմպերիալիզմի լուծը, նրանցից վերջնականապէս ազատւելու համար:

Խորհրդային Հայաստանը եղբայրական կապերով միացած է Խորհրդային մեծ Ռուսաստանի հետ, որի աէրը բանտորներն ու գեղացիներն են և որն ունի մի ամրակուռ իշխանութիւն, որպիսին է կանտրոնական գործադիր կոմիտէն:

Առողջարկում է մեր անունից ողջունել Խորհրդային Ռուսաստանի կենտրոնական գործադիր կոմիտէին (ծափեր):

Ալդ տոթիւ կիսուի ընկ. Մակինցեանը:

Պ. Մակինցեան:—Թոյլ տւեք կարդալու Խորհրդային Ռուսաստանի Կ. գործ. կոմիտէին ընկեր Կալինինի անունով ուղղւած հեռոգիրը:

Նախազահ Ընկերներ! մեր մեծ յեղափոխութեան պարագուխներն են եղել հայաշխարհային մաշտաբով վերցրած ընկեր Լենինը, Տրոցկին (ծափեր ամբողջ դահլիճը երգում է ինտերնացիոնալ): Ընկեր Թոյլ տւեք Ձեր անունից որպէս Հայաստանի բանտորների և աշխատաւորների իսկական ներկայացնեների, այս համագումարի պատւաւոր նախագահներ ընտրել ընկ. Ընկ. Լենինին, Տրոցկուն և Կալինինին (ծափեր): Համագումարի նախագահութեան կողմից յայտարարում եմ համադումարի օրակարգը:

1. Փողովրդտկան կոմիսարների Խորհրդի հաշւեաւութիւնը (Մեասնիկեան)

2. Խ. Հայաստանի Սահմանադրութիւնը (Մասւեան)

3. Անդրկովկասի Հանրապետութիւնների Փեղերացիան (Մուաւեան)

4. Մեր տնտեսական քաղաքականութիւնը (Լուկաշին)

5. Գիւղատնտեսութեան և հողային քաղաքականութիւնը (Երզնկեան)

6. Կօօպերացիա (Պիճիկեան)

7. Պարժողկոմի հաշւեաւութիւնը (Խւանեան)

8. Հասարակական ապահովութիւնը Հայաստանում:

9. Կարմիր Բանակը

10. Կենտրոնական գործկոմի ընտրութիւնը:

Օրակարգի մասին ասածարկներ ու փոփոխութիւններ կան թէ ոչ—չկան. ուրեմն համարել ընդունւած (ծափեր). օրակարգի տռաջին հարցի մասին կ գեկուցի ժողկոմների Խորհրդի նախութան ընկ. Մեասնիկեանը:

### ԵՆԿԵՐ ՄԵԱՍՆԻԿԵԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

(«Բուռն եւ երկարացել ծափեր, ովացիաներ. բացականչութիւններ՝ չկեցցէ հայկական լենինը»):

Ընկերներ, ես այստեղ պիտի տամ մեր կառավարութեան կողմից հաշիւ, որ ընդգրիկ մօտաւորապէս մի տարւա ժամանակամիջոց: Այս միտարւա ընթացքում Խորհրդի կառավարութիւնը Հայաստանում աշխատել էմի կողմից վերացնել հինը, անպէտքը, միւս կողմից կամաց-կամաց ամրապնդել իր հիմքերը, անել այն գործը՝ որդրւած է հայ բանտորների և գեղացիների ուսերի վրա:

Խորհրդի կառավարութիւնը իր յաղթանակից յնտել ինչ սահցաւ հին կսուավարութիւնից որպէս ժառանգութիւն: Եթէ մենք ունենայինք փաստաբաններ, որ պաշտպանէին մեր ժառանգութիւնը, հոնորաբը ոչ թէ նրանք, այլ մենք պիտի ստանայինք (ծափեր): Հին կառավարութիւնից մենք ստացանք քանդւած երկիր, քայլացյաւծ ժողովուրդ. պէտք էր նախ կարգի ձգել նրան և ապա անցնել շինարար աշխատանքի: Երբ մենք այս դրինք մեր կէտ նպատակ, մեր արտաքսւած թշնամիները կած երկրի զանազան ծալեցրում ապաստանած թշնամիները այստեղ ու այնտեղ հակայեղափոխական բռնկումներ էին առաջ բերում, որպէսպի երկիրը հասցնեն վատթար գրութեան:

Խորհրդի կառավարութիւնը Հայաստանում պիտի մուցնել տար հին կառավարութեան, դաշնակցութեան հիմունքները թէ արտաքին և թէ ներքին քաղաքական կեանքում: Ի՞նչ էր գաշնակցութեան օրով հին միջազգային քաղաքականութիւնը. դա բնորոշել կարող ենք մի խօսքով:—հայի վաղեմի դիանագիտական քաղաքականութիւն, որը ելակէտ ունէր եւրոպական երկրների այս կամ այն քաղաքական փոխյարաբերութիւնը՝ որպէս բռւրգուական դասակարգերի շահերից բղխած քաղաքականութիւն, այս կամ այն մոմենտակին: Դա միջազգային դիպլոմատիայի խողերից ու քմահաճոյքից կախւած քաղաքականութիւնն էր: Մեր աշխատաւորական քաղաքականութիւնը ուրիշ է: Մենք հիմնում ենք աշխատաւոր դասակարգերի փոխյարաբերութեան վրա: Հայկական նախկին բուրժուական կառավարութիւնները միշտ մտածել են, որ մեր բաղդը կախւած է եւրոպական դիպալիմատիայի քմահաճոյքից, որ անդիմական բուրժուազիան կամ Ֆրանսիան կարող են Հայաստանն ապատագել, որ Ամերիկան կը վերցնի Հայաստանի մանդատը, ևայլն, ևայլն Բայց Հայաստանի այդ իմաստունները, այդ քաղաքագէտները երբէք չեն

մատել այն ժամանակ որ շամամարդկային ուժին բրնձք էլ սառնակցն, հակազդելով այդ ուժը բուրժուական թաթին և աղաւակով իրենց հայրենիքը, որպէս չարչարող կողմէ Եւ երբ մենք այսօր թերթում ենք պօսական հայաթերթերը առանում ենք, որ այստեղ էլի զառանցում են այդ իմաստունննը և Հայաստանի բաղդը կապում են զարձեալ եւրոպական բուրժուական քաղաքականութեան բազդի հետ Հարցեր են գնում, թէ մի, թէ երկու Հայաստան պիտի լինի, Մարզիկ իրանց չունենալով դեռ մի Հայաստան, խօսում են երկու Հայաստանի մասին (ծափեր).

Ըսկերներ, ալ է մեր տէսակէտը, մենք հիմնում ենք աշխատաւութեան վառ և նրա տեսակէտով առաջնորդում, ոյն է, կազ պահպանել աշխատաւոր տարրերի, Խորհրդային երկրների հետ և այդ ուղիով ապահովել մեր երկիրը, Մեր օրիէնտացիան աշխատաւորական է, Մենք մեր նաւը բռնում ենք Խորհրդային երկրները կողմը, կազ պահպանելով նաև եւրոպայի, Արեւուտքի, նրա պղուխտարիատի հետ անխափի, Այս ուղիով մենք կարող ենք հասնել մեր նպատակին, Մենք մեր օժանդակութիւնը կարող ենք տալ բոլոր հայ աշխատաւորներին, եթէ նըսանք ցանկում այս օրիէնտացիան ընդգրկել, Ներկա Խորհրդային Հայաստանը եղել է միտք երկիրը, որ կարողացել է մի տարա ընթացքում խաղաղութիւն հաստատել իր երկրում դաշն կապելով հարևանների հետ և պահպանելով Հայաստանի ժողովքի ֆիզիքական գոյութիւնը, Այս տեսակէտն ունենալով, մենք գոացինք Ղարս, Դաշն կապեցինք թիւրքերի հետ, որոնք համար էին Հայաստանի դարաւոր թիւնամիները, Արտասահմանան թերթերը շարունակ գրում էին, որ Հայաստանի համար այս դաշն իսայտառակ դաշն էր, բայց հայ աշխատաւորութիւնը առ հասկանում է, որ այդ դաշնը նրաշխառորեց իր խաղաղ կեանքը, Մինչդեռ Դաշնակցութիւնը մտածում էր մի անկախ Հայաստանի ժամանակ, որ տարածելու էր ծովից ծով և բռնելու էր ներկայ Ֆրանսիայի երեք քառորդ տարածութիւնը, Տենք հրաժար նշինք այդ յիմարութիւնը, մենք հրազները տոաջ կը քերեն միայն ազգակործան կոիւներ՝ ինչպէս եղել է անցեալում, Դարսի դաշնագրով, մենք ապացուցինք, որ կարող ենք ազրել մը հարևանների հետ, Մենք կարծում ենք, որ թէ հայ, թէ թիւրք ժողովուրդները՝ աշխատաւորներ են, որոնք երբէք մեղաւոր չեն փոխազարձ չնշման գործում, այլ մեղաւոր են եղել նրանց կառավարութիւնները, ժողովուրդը պիտի կրթել դաստիարակել և Խորհրդային Հայաստանը գործնականապէս նրկրի շինարարութեանը (հայութանի).

Նոյն միջազգային քաղաքականութիւնը մենք առանք Առ դրկովկասում, Վրաստանի և Աղքարէջանի հանգէտ նախկին կա-

ռավարութիւնը նրանց յետ էլ շարունակ կուր մէջ էր, Մեր օրով վերջացան այդ վեճերը և այժմ բոլոր Կովկասեան Խորհրդային հանրապետութիւնները ապրում են եղբայրաբար, Նորերս մենք ցանկութիւն յայտնեցինք, որ Կովկասեան հանրապետութիւնները իրար հետ դաշն կապեն՝ ստեղծելով Խորհրդային ֆեդերացիա, Այն ընկերը, որ այստեղ պիտի զեկուցի այդ մասին, կապացուցի, որ այդ ֆեդերացիան աելի և կամրապնդի աշխատաւորութեան շահերը և Կովկասը, մանաւանդ մեր երկիրը, կարող է տնտեսական նեղ դրութիւնից աղատել, Անա այն քաղաքականութիւնը, որ մենք առաջ ենք տանում, Թող մեր թըշնամիները խօսեն, որ մենք զաւածանում ենք ժողովրդին, Այդ ժողովուրդն այսօր տեսնում է, թէ ինչ զրուծ է կատարում մեր կառավարութիւնը:

Արժմ, ընկերներ, թոյլ ուշէք անցնել մեր ներքին քաղաքականութեան:

Մեր ներքեն քաղաքականութիւնը մենք տանում ենք մի որոշ գծով, որ կարմիր թիւրդ անցնում է մեր գործերի միջով, Դա կայանում է նրանում, որ մենք ունենալով դէկր մեր ձեռքին, յենելով բանւորների և գիւղացիների վրայ հրաւիրում ենք և հարաւորութիւնը ենք տալիս բոլոր կարող ուժերին՝ աշխատանք թափել մեր երկրի վերջինութեան համար, Այդ բանի մէջ մենք որոշ զիջումներ ենք անում որոշ տարրերին, Մանք ազագայում էլ կը տանենք այդ գիծը եթէ համագումարը ցանկանայ, Իրականութիւնը ցոյց տեհց, որ այդ քաղաքականութիւնը արդարացի է, Այնպէս Հայաստանն է, ուր աշխատաւորական գառակարգերի մեծ մասը կազմում է գիւղացիութիւնը, ուր մեծ ժամամթ անտեսութիւնը մանր է, մենք միայն այս քաղաքականութիւնը կարող էինք առնել, Եթէ այսօր Ռուսաստանի քաղաքականութիւնը համարում է նոր, այդ քաղաքականութիւնը Հայաստանի համար ամենասկզբից պէտք է լինէր, Ինձ թւում է, թէ այդ քաղաքականութեան վոզից բռնելով ներկայ, կառավարութիւնը կարող է իր գործը վարել, Աղգերի համերաշխութեան տեսակէտից ևս նոյն քաղաքականութիւնը պիտի վարենք ինչպէս ներսում, նոյնպէս դրսում, Այսուհետ կան եղիղիներ, թուրքեր, և ուրիշ տարրեր, որոնք հարազատ են զգում իրանց, Եղբայրական կազ բոլոր ազգութիւնների միջեւ, որովհետեւ ազգային խնդիրը ջնասում է նրանց, Այսօր, Խորհրդային կառավարութեան օրով, ականատես չենք այն բանին, որ հենց տռաջին բոլեկից վերացւել են բոլոր ազգամիջեան զըժառութիւնները, որոնք գանցակների օրով սովորական էին, Բայց մեր թշնամիները միշտ էլ աշխատել են մեր դէմ փոթորիկներ բարձրացնել, այս քաղաքականութեան ընթացքին, Խաշնակները չեն կարող հաշտել այն բանի հետ, որ այս երկրում լինի Խորհրդային նշանութիւն, Նրանք զէնք վերցրին մեր դէմ անցեալ

յունիս-յուլիսին՝ Զանգեզուրում Սակայն մենք եզանք համբեռատար, զնացինք նախ նրանց մօտ, վերացնելու կուի հնարաւորութիւնները, բայց թշնամին եղաւ առաջինը, որ թէ փետրւարին, թէ Զանգեզուրում նախայարձակ եղաւ, նմանւելով առակի այն գայլին, որ միշտ դէպի անտառն է նայում: Մենք պիտի զսպէինք այդ գայլին և մենք զսպեցինք՝ Կարմիր Բանակի շնորհիւ (ծափեւ):

Արտասահմանում շատ յաճախ, թերթելը գրում են, որ Հայաստանում հալածում են ոչ-կոմունիստ առջրերին, որ բանտարկութիւններ, բռնութիւններ են լինում, և այլն, և այլն: Մենք ամշուշտ չենք կարող վերացնել բանտերը, ովքեր դէմ են աշխատաւորների գործին պիտի պատժեն: Բացարձակ ազատութիւն ոչ մի տեղ չկա, յիմարների համար միայն կա: Բացարձակ ազատութիւնը միայն իրենց հալալ աշխատանքով ապրողների համար կա: Այն մարդիկ, որոնք դէմ կերթան մեծամասնութեան շահերին, նրանք կը կրեն անշուշտ իրենց ամենամեծ պատիժը: (Ծափեւ): Հայաստանի ներսում թող ժողովուրդը խօսի ու գնահատի մեր բաղաքականութիւնը: Մենք զանազան կուռակցութիւններին, խմբակներին տւել ենք ազատութիւն: Օրինակ, մենք թոյլ տիխնք հրատարակել այստեղ «Մշակ» անկուսակցական թերթը, սակայն նա չկարողանալով մրցել մեր իդէաների հետ, քոչեց այստեղից թիֆլիս: Քանի որ դաշնակները կը մնան հլու սպասուու երոպական բուրժուազիային, մենք նրանց չենք կարող տալ ազատութիւն, որովհետև նրանք քար ու քանդ կանեն մեր երկիրը, իսկ այդ բանը չի ուզում հայ աշխատաւորութիւնը: Աշխատաւորական դաշնակցականները մեզ զիմում են արել, որ թոյլ տանք իրանց ազատ գործելու այստեղ: Մենք պատասխանել ենք նրանց: «Քանի ձեր ճակատին կը կրէք «Պաշնակցական» կործանարար բառը—մենք չենք կարող թոյլ տալ գուշերէ միայն աշխատաւորականներ և այն ժամանակ տեղ կը գտնէք մեր երկրում (ծափեւ):

Ըսկերներ.

Մենք այստեղ լուծեցինք նոյնիսկ հոգեսրականութեան հարցը, եկեղեցու հարցը: Հոգեսրականները երբէք չսիմի ասեն, որ իրենք հալածում են: Խիզը և կրօնը այստեղ ազատ է, միայն թէ հոգեսրականները չսիմի զբաղեն քաղաքականութեամբ: Հոգեսրական բաղաքազէաներ մեզ պէտք չեն: Վերջերս, սակայն, Պօլսահայ թերթերում կարդացինք, թէ Հայոց կաթողիկոս մի կոնդակով լուսաւորչի շքանշանն է տւել Պօլսու Նուբար փաշային և Նորստունիեան էֆէնդիին, որ «զցայդ և զցերեկ տքնէք առ զրունա պիտութեանց», ինչպէս ասուած է կոնդակում: Փաշան և էֆէնդին ինքնակոչ կերպով Հայաստանն են պաշտպանում և ծեծում են երոպական մինիստրների գոները: Պօլսու նուբարի արածը մի լաքէցութիւն է, իսկ շքանշան տրւում է

Գերասութեան և գործի համար և ոչ թէ սպասաւորութեան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՔԵՐԱԿՈՒՐԱ ՊՈՎՈՂԱՅԻ 7/31. 1922

Այստեղ ահա, մենք կարող ենք առել մեր սուրբ հուրերին: «Մի քիչ սպասեցէք, մի քիչ սպասեցէք, գուցէ շատ էք շտապում և զբաղւեցէք միայն ձեր կրօնական գործերով»: (ծափեւ):

Մենք մեր վերաբերմունքը ցոյց տւինք նոյնպէս ինտելիգենցիայի հանդէպ: Մենք հրաւիրեցինք նրան գործի: Նրա լաւագոյն մասը եկաւ անկախ իր դաւանանքից: Եթէ նա յանուն աշխատաւորութեան կաշխատի, թող աշխատի: Մենք մեր սահմանները բացինք խարւած դաշնակների առաջ: Արտասահմանան ինտելիգենցիան ևս ազատ կարող է զալ: Խորհրդային Հայաստանը ներկայացնում են արտասահմանում որպէս վիշտ՝ որը եկողին կը կլանի, մինչդեռ շատ եւրոպացի բուրժուազիա գտլիս են այստեղ և եւրոպացի ու Պօլսի պոռնիկ փողոցներից ուելի զնահատում երկանի փողոցները:

Մեր հոգսիրից ամենախոշորը քաղաքի բանւորութիւնը գիւղացիների հետ կապելն է, որովհետեւ տոանց իրար ուժի՝ չենք կարող մենք տէր գառնալ այս երկիրն: Խորհրդային կառավարութիւնը գիւղացու համար ամենալաւ: կառավարութիւնն է: Գիւղացու և բանւորի բնկերակցութիւնը պիտի ամբացնել: Երկիրը պիտի բարձրացնել մանր տնտեսութեամբ, տաւոց որի անկարելի է մեր ողջ տնտեսութիւնն ապահովել: Եւ մենք առանձին ուշագրութիւն ենք դարձրել այդ հանգամանքի վրայ: Իւրի փաստ, տաեմ ձեզ, որ մեր գիւղատնտեսական կոմիսարիատը բաց է թողի 60,000 փ. սերմացու, 100,000 փ. հացահատրի, որ մեր միջոցներով ձեռք ենք բերել Պարսկականից: Բաժանւած է գիւղացիներին զանազան տհսակի 6000 երկրագործական զործիքները: Անշուշտ սա մի մեծ բան չէ, սակայն պիտի նկատի ունենաւ: թէ ինչ ծանր ու դժւարին պայմաններում ենք ստեղծել ու ձեռք բերել ոյս ամենը: Մեր նարկումզե (Հողժողկոմ) հրատարակել է մի օրէնք, որով գիւղացին կարողանագրացնել իր տնտեսութիւնը: Նա օգուտիւն է ցոյց տւել այգետէրերին: Այս երեք տարի խաղողի թփերը թաղւած չէին, իսկ այսօր այդ արւում է: Մի խոշոր հարց էր զրւած մեր առողջ—ամբողջ երկիրը ոտքի հանել այս գարնան՝ հողի աշխատանքի համար: Մեր խողուկ գանձարանից տւել ենք արգելու գումար այդ նպատակի համար: Մենք մեր խորին ուշագրութիւնը դարձրել ենք այս Կոմիսարիատի (Հողժողկոմի) վրա:

Սովորխողը (Ժողովրդական Տնտեսութեան Գերագոյն Խորհ հուրդ) որ անմիջապէս զբաղւում է քաղաքացին տնտեսութեամբ, սահմանափակ դեր է ունեցել: Նա աշխատել է ոտքի կանգնեցնել գործարանները, ինչպէս կոների (օղու, զինու, կաշի) գործարանները: Ալլահիբրդու գործարանն միրանորոգումը և աշխատանքը Սովորխողի կարեոր գործերից մէկը պիտի համարել:



թէն անհղաստ պայմանների պատճառով դժւար են առաջ գնում Սովորխողի գործերը, բայց յօյս ունենք, որ նա ունի այնքան ուժ որ կը կարողանա շարունակել և լրացնել իր առաջադրած աշխատանքները:

Պարժողկոմը տարել է խոշոր աշխատանք: Նա ստացել է պարէնը գնման ու փոխանակութեան միջոցով, անց է կացրել պարենատուրքը մեծ յաջողութեամբ: Հաւաքւած տուրքի 3—4 րդ մասը կզնա ցանքսի համար: Պարէնատուրքը գիւղացու և բանւորութեան փոխարքերութեան անտեսական հիմքն է: Գիւղացու վրա ծանր պարտականութիւններ չենք դրել, նրան առաջարկել ենք միայն օգնել պետութեան, բաղաքին, տալ նրան պարէն, իսկ պետութեանը իր կողմից խոստանում է ապահովել գիւղացու հանգիստն ու աշխատանքը: Գիւղի և բաղաքի դաշնքը այդպիսով հաստատ է մեզանում: Պարժողկոմն արէն հաւաքել է հացի 72 տոկոսը, մսի 89 տոկոսը: Սա մի մեծ յաղթութիւն է, որ ձեռք է բերւած խաղաղ ու նորմալ միջոցներով:

Չորրորդ խնդիրը կօօպերացիան է Հայաստանում որ «Հայկօպ» կոչումն ունի և որը գոյութիւն ունէր և դաշնակւերի ժամանակ, բայց ծառայում էր այլ նպատակների, իսկ այժմ նա աշխատաւորների և գիւղացիների շահերին է ծառայում և իր ձեռք բերած պարէնը բաժանում նրանց մէջ: Նրա գերը այդ տեսակետից նշանակալից է: Նա կազմակերպում է նաև արտադրողական, սպառղողական և այլ մարմիններ: Խորհրդային իշխանութեան Հայտուտան մտնելուց առաջ այստեղ գոյութիւն չէ ու նեցել ոչ մի ընկերակցական հիմնարկութիւն, իսկ այժմ արդէն 115 այդպիսի հիմնարկութիւններ կան, որոնք մինչեւ այժմ ուսկու հաշւով 105,000 ր. տևել են գիւղին և սաացել ապրանքներ: Այժմ 12 զանազան արդատրական հիմնարկութիւններ են բացել ինչպէս կաշի, սապոնի և այլն, որոնք օգնութեան հն համում մեր հիմնարկութիւններին: Այս հինգ ամսուա ընթացքում արտասահմանից ահազին քանակութեամբ ապրանք ենք ստացել: Մեր գաղութների մի քանի թերթեր կոկորդիլոսեան արցունքներ են թափում այն մասին, թէ Հայաստանը ոչ մի տեղից ապրանք չէ ստանում:

Ընկերներ մինչեւ այժմ ստացւած է երևանում և Ալէքպրլում 3 միլ. 23,000 ֆ. ապրանք չհաշւած Դարաքիսան ու Հայաստանի միւս գաւառները: Թող դաշնակցականները հաշիւ տան մեզ այն մասին, թէ որքան ոսկիներ ու թանկարժէք իրեր եր տարել Հայաստանից և թէ իրենց անտեսական քաղաքականութեան օրօք ինչ ապրանք էր ստանում Հայաստանը: Խ. Ռուսակատանից մինչեւ այժմ ստացւած է 3 և կէս միլ. բուրլի ոսկի, որը շատ մեծ բան է մեր սահմանի գրութեան հետ համեմատած: Բայց այս պատկերը լրիւ չէ, ընկ, երգնկեանն ու իւանեանը ձեզ մահ-

բամման ցոյց կտան, թէ տնտեսական ասպարիզում ինչ աշխատանքներ են կատարւած:

Յամենայն դէպս ընկերներ, պիտի ասեմ, որ մի գործ կատարւած է այստեղ, որի մասին շատ պարզ ցոյց են տալիս թւերը: Մենք ունենք այս աշխատանքների համար մշակւած մի սիստեմ, որը չնայած հանձարեղ չէ, համեստ է, բայց մի քայլ է զէպի առաջ: Մենք ստեղծում ենք մի կանւա, որը ուաքի կը կանգնեցնէ տնտեսապէս քայլայւած Հայաստանը, բայց այս բոլորը միայն այն դէպում, երբ խաղաղութիւնը յարատելի մեր երկրում:

Անցնում եմ սոցիալական ապահովութեանը:

Հայաստանը մի երկիր է, ուր սոցիալական ապահովութիւնը, նոյն գերն է խաղում ինչ գիւղատանտեսութիւնը: 50 հազար որբ ունենք, որոնք պահուում են մեր, ամերիկացիների և այլոց միացեալ ուժերով: Նրանց մի մասը գեռ չի տեղաւորւած: 200,000 զաղթականութիւն կա Հայաստանում: Մի երկիր, որը մէկ և կէս միլիոն ժողովարդ ունի, որը կապւած չէ հողին և արդիւնաբերութեան, նրան պիտի կերակրել և այդ մասին մենք հոգում ենք: Մենք հիւրինկալել ենք ամերիկացիներին որոնք գործունեա մարդիք են, նրանք իսկապէս որ մի գործ անում են աւտական, չեն զագուում քաղաքական հարցերով և արժանի են մեր քաջերութեան: Միջազետքի գաղթականութիւնը ընդունւած և հիւրինկալւած է մեզ մօտ: Անտանան նրա վրա ուշադրութիւն չէր գարնում, նրան բացի մեզանից ոչ ոք չէր կարող օգնել և ճիշտ է, որ ազգատը միայն ազգատին կարող է հասկանալ (բայց նափեր):

Մենք գործի ենք կանչել հայ ինտելիգենցիալին, թոյլ ենք տւել հիմնել Հայաստանի Օգնութեան կոմիտէ, որը մեղ օգնութեան է ուղում գալ և որին այդ գործի համար մենք տալիս ենք բոլոր հարաւորութիւնները: Մենք անտեսական պատերակութիւն ուղարկեցիք Արտասահման, գարձեալ հայ աշխատաւորութեան շահերի համար: Արտասահմաննեան հայ աշխատաւորութիւնը քաջալերում է նրա բայլերը, իսկ բուրժուական թերթերում աւելի շատ խօսք, բան զործ ենք տեսնում:

Դաշնակցութեան ժամանակ բաղմաթիւ Փոնդեր կային Արտասահմանում, որ խօսուում էին նրա պարագլուխների կողմից:

Ալժմ եղած նոյն գրութեան չենթարկելու պէտք է ունենալ ունիղիա և խիստ ստուգութիւն:

Թոյլ տէք ընկերներ, անցնելու մեր գործի մի այլ կողմին, մեր հասարակական կը թութեանը: Հայաստանը մի երկիր, էր ուր արմատացել էր բարքերի անկումը, կաշառակերութիւնը, գողութիւնը, որոնք բուրժուական տիրապետութեան հետևանք էին և պէտք էր եռանդուն աշխատանք թափել հեռացնելու այդ թերու-

**Թիմները:** Կոմունիստական տարրերը ամենայն թափակ այդ աշխատանքները առաջ են տանում:

Լուսժողկոծը որոշ աշխատանքներ է տանում թէ գեղարվատի և թէ լուսաւորութեան այլ ճիշերում: Պոլսի «Ժողովրդի Զայն»-ը առում է. անհամականալի են Հայաստանի կառավարութեան շոայլութիւնները գեղարւեստի համար, երբ երկիրը քաղցած է: Իբր թէ մենք սնանկ լինելով, լուսաւորութեան գործի վրա միլիարդներ ենք ծախսում: Այսպիսով նրանք մեր հաշւին չեղ քարոզ են կարդում (ծափեր), բայց պիտի իմանալ, որ մեր աշխատաւորութիւնն ունի իրաւունք այս մասին խօսել: Լուսաւորութեան գործը թողած միմիայն տնտեսական և այլ խնդիրներով զբաղել չենք կարող: Մեր յաղթութիւնը կրթութիւնից, գետակցութիւնից և զատիքարակութիւնից է կախւած: Մենք բաւական մեծ ուշադրութիւն ենք դարձնում օրինակ կարմիր բանակի կրթութեան ու ինքնազիտակցութեան վրա, որովհետեւ համոզւած ենք և փորձով գիտենք, որ առանց կոմունիստական գաստիարակութեան բանակը չի կարող յաղթանակներ տանել: Ես այդ խնդրների վրա երկար չեմ ծանրանում: Այժմ ընկերներ, պէտք է նկատի մի հանգամանք ես, որ մեր թշնամիները ասում են, թէ Հայաստանում զիցուք գործ է կատարւում, մեղ նոյնիսկ գովարանում են, բայց արի տես որ ասում են նրանք, Հայաստանը կորցրել է իր տնկախութիւնը: Բայց ինչ էր ձեր տնկախութիւնը, հետաքրքիր է: Դուք կախւած էիր Անտանտացից, շրջապատած էիր ամեն կողմից (ծափեր), դուք ներքին շինարարութեամբ չեք կարող զբաղել, իսկ մենք խղեցինք այդ բոլոր կապերը, վերացրինք այս երկրի զլիքն կախւած դամոկւեան սուրը և տիփնը նրան իսկական անկախութիւն: Անկախութիւնը նպատակ չէ աշխատաւորութեան համար, այլ միջոց, իսկ նպատակը՝ բարեկեցիկ կեանք և լուսաւոր ապագան է, յանուն որի երկիրը կուռւմ է: Նրանց քաղաքական նպատակները իբր թէ անկախութիւնն է եղել, այն ինչ երկիրը նրանք սպանդանոց էին դարձրել: Նրանք սկզբունքի և գործի մարդիկ չեին և այդ պատճառով փրփուրի նման գնացին ու չքացան: Յանուն այն բանի, որ բանւորը մուրճ ունենա իր ձեռքին, իսկ գիւղացին հոգ, մենք կազմակերպել ենք կ, Բանակը, յաղթահարել ենք բուլը դժւարութիւնները ու ձեռք բերել իսկական անկախութիւն:

Խօսում է լիզի մասին, թէ հայ լիզուն կորու տիրապետովը լինելուց, իսկ ես ասում եմ երջանիկ են Հայաստանի բուլը ազգութիւնները, որ հնարաւորութիւն ունեն իւրաքանչիւրն իր մայրենի լիզով խօսելու (ծափեր): Խօսում են, թէ նա ինչ կառավարութիւն է, որի զլիքն Խուսաստանի կ, Բանակն է կանդնած, բայց ով կուրանա, որ մենք ենք նրան կանչել, որովհետեւ միմիայն մեր սեփական ոյժերով իսկոյն ազատագրւել չեինք

կտրող: Խոկ ազատւել պէտք էր: Այս, մենք ասում ենք, որ այս երկիրը մերն է և չնայած որ գանւում է դժնգակ պայմաններում, բայց և այնպէս նա դուրս կը գա այդ զրութիւնից ոչ թէ կարեցութիւն հայցելով, այլ աշխատաւորութեան հուժկու բազակ ներով: Դրութիւնն, այս, ծանր է, բայց նրան պէտք է հանել այդ վիճակից: Գրակիս ասում էր ին Հոռմում, թէ վայրի գաղանները ազգամայն գլուխը դնելու տեղ ունեն, իսկ ստրուկները ոչ: Մի տարի առաջ նոյն բանը Հայաստանի մասին կարելի էր առել, որը թ. Իշխանութեան շնորհիւ այժմ վայելում է ազատութիւն և իսպազութիւն: Մենք սրի ու հրի միջով ձեռք ենք բերել ազատ ապրելու հնարաւորութիւնները: Մեր կէտ նպատակն է այժմ դուրս բերել աշխատաւորութիւնը ծանր վիճակից և աիրացնել իր իշխանութեանը: Մենք կատարել ենք աշխատաւորութեան մեր վրա զբաժականութիւնները, մենք կատարել ենք արդար գործ: Կեցցէ այդ արդարը գործը, (Երկարաւել բուլն ծափահարութիւններ, ու անցնում են օվացիաների):

## Բ. Ն Ի Ս

### ԸՆԿ. ԵՐԶՆԿԵԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Նիստը բացւում է յունւարի 31-ի առաւօտեան ժամը 11-ին, ընկ. Աւիսի նախագահութեամբ:

Նախագահ. — Խորհուրդների համագումարի երկրորդ նիստը յայտարարում եմ բացւած: Մեր աշխատանքները կանոնաւորելու համար անհրաժեշտ է ուղղամմենու մշտիկը Այդ մասին ասած ջարկութիւններ կան, թէ ոչ: Խօսքը տրւում է ընկ. Շահզեալ դեանին:

Շահզեալին: — Առաջարկում եմ հետեւել սեղամենտը՝ Զեկուցողին տալ 1 ժամ, զեկուցակցին 20 բոպէ: Վիճաբանողներին՝ առաջին անգամ 10 բոպէ, երկրորդ անգամ 5 բ. վիճին խօսք զեկուցողին 20 բոպէ, վերջին խօսք երկրորդ զեկուցողին 10 բոպէ: Թեր և դէմ ամեն մէկին 3 բոպէ: անձնական յայտարարութեան համար նիստի վերջը 3 բոպէ: Համազոււմարի նիստերը առաւօտեան 10-ից մինչեւ 3-ը և երեկոյեան 5-ից 9-ը, Քսան և հինգ պատգամաւորներ կարող են երկրորդ գեկուցող առաջարկել:

Նախագահ. — Ուրիշ առաջարկներ կմն, թէ ոչ — չկան — թոյլ աւէր այս սեղամենտը համարել ընդունւած (սեղամենտը ընդունում է), ընկերներ, երէկ առաջին նիստը մենք փակեցինք ընկ. Մետանիկեանի զեկուցումով: Այդ զեկուցումը անհրաժեշտ է թարգմանել ռուսերէն: Ծնկ. Դ. Տէր-Միմէօնեանը կթարգմանի ուսւուելու համար:

Դ. Տեր-Սիմեոնեան.—(Ընկ. Մեասնիկեանի առաջին նիստին տևած զեկուցումը թարգմանում է ռուսերէն, որ ընդունուում է ծափերով):

Նախագահ.—Ընկերներ, ընկ. Մեասնիկեանի զեկուցման առթիւ խօսել ցանկացողներ կան թէ ոչ—ոչ: Իսկ որիէ առաջարկութիւն այդ զեկուցման առթիւ: Առաջարկութիւն կա ընդունել բանաձև:

Ընկ. Դ. Տեր-Սիմեոնեանը առաջարկում է բանաձև:

Նախագահ.—Բանաձևի դէմ որիէ առարկութիւն կա, թէ ոչ—ոչ, ուրեմն համարենք ընդունւած (բանաձևն ընդունուում է բուռն ծափերով): Մեր օրակարգի 2-րդ հարցը սահմանադրութեան և ֆեդերացիայի մասին է: Բայց նախագահութիւնը գտնում է, որ հողոյին հարցը աւելի հարւածային է, ուստի ինդրուում է դնել այդ երկրորդ տեղը:

Նախագահ.—Թարգմանելու համար խօսքը արւում է ընկ. իշենդիկին:

Էֆենդիւ.—(Օրակարգի փոփոխութեան մասին եղած խօսկութիւնները թարգմանում է թուրքերէն):

Նախագահ.—Խօսքը պատկանում է ընկ. Ար. Երգնիկեանին:  
Ա. Երգնիկեան, (Հողժողկոմ).—Որպէսզի Հողային կոմիսարիանը հնարաւորութիւն ունենար բարձրացնելու մեր երկրի գիւղանտնութիւնը, մի այնպիսի գիւղացիական երկրի ինչ պիսին է Հայաստանը, որի անտեսութեան 8 տոկոսը կազմում է գիւղանտնութիւնից ստացւող բարիքները անհրաժեշտ էր մշակել մի հիմնական ծրագիր: Այդ կարելի էր անել միայն այն ժամանակ, երբ մեղ համար պարզ լիներ մեր երկրի հողի, կիմայի, աշխարհական դիրքի, հողի արդիւնաբերութեան և այլ պայմանները: Այդ տեսակէտից Բնչ է ներկայացնում իրենից մեր երկրը: Մենք տեսնում ենք, որ Հայաստանում ոկտած ամենաբարձր կուլտուրայի մշակութիւնից՝ բամբակից մինչև ամենասրբին տեսակի մշակութիւն գոյութիւն ունի: Իրեւ հետևանք նման ուսումնակիրութեան, Հայաստանը մենք բաժանում ենք, ըստ նրա աշխարհագրական դիրքի երեք ըրջանների կամ դուսների:

Դրանցից առաջինը բարձր կուլտուրայի ըրջանն է, ուր շնորհիւ աշխարհագրական և կլիմայական պայմանների մեզ տալիս է բամբակ, ծխախոռ և բարձր կուլտուրայի այլ արտադրութիւններ, երկրորդը, կա միջին ըրջանն է, ուր աղջաբնակութիւնը զբաղւում է հացահատիկային կուլտուրայի մշակութեամբ: Երրորդ ըրջանում զբաղւում են անստանդահութեամբ: Սակայն պիտի ասել, որ այս երեք ըրջաններումն էլ ազգաբնակութիւնը զբաղւում է իրան անտեսութեամբ: Օրինակ, այնտեղ, որ տիրապետող զբաղմունքը անամապահութիւնն է, գոյութիւն ուսի

նաև սահմանափակ ըրջանակում հացահատիկային մշակութիւն, բամբակի մշակութեան զօնայում նաև մասամբ անսամնապահութիւն և այլն... բայց այս երեք ըրջաններում էլ թւածու մշակութիւնը գտնուում են պրիմիտիվ դրութեան մէջ և միանգամայն բացակայում են, կամ գիւղացիութեան անծանօթ են գիւղանտեսութեան կատարելագործւած ձևերը: Մնկ համար կարեւոր անհրաժեշտութիւն է ներկայացնում այն խնդիրը, որ գիւղանտեսական ձևերը Հայաստանում այս կամ այն տեղի համար հարաւորութեան սահմաններում մի օրինակ ընոյթ ստանան, կամ դոնէ իրականանար այդ ծրագրի գէթ 85 տոկոսը, որով հնարաւորութիւն կատացէր գիւղանտեսութիւնից ստացւածը բարձրացնելու 100 տոկոսի: Այս այս ծրագիրը հիմք պիտի դարձնել մեր գիւղանտեսական քաղաքականութեան և որպէս անհրաժեշտ մի խնդիր մեր հերթական զբաղմունքի առարկան դարձնել: Այս հիմնական ծրագրից հ զանազան ըրջանների գիւղանտեսական կուլտուրաների զարգացման կարիքից ու պահանջից բջիջնում ենք հողային հարցի լուծումը: Եյս խնդրի լուծմանը մենք չենք մօտենում քարացած նորմաներով, այլ ի նկատի առնելով երկրի գիւղանտեսական կուլտուրաների պահանջները, հողային պայմանները և նրա ու աշխատաւորութեան կարիքները ըստ այնմ էլ հարց է զրւում և որոշում լուծման եղանակները: Դաշնակցութեան սիրապետութեան օրոք հողային հարցը Հայաստանում չէր լուծած: Անդրկովկասեան Սէյմի օրէնքի հիմքը մասր հողատիրական էր, որի միջոցով ստեղծւած էր մասր բուրգուական հողատիրութիւն: Հողային հարցի լուծումը մեզ մօտ այլ բնոյթ էր կրում, քան Խուսաստանում, Վրաստանում, Աղբէջանում: Հայաստանում հողային պայմանները տարբեր են, որովհետեւ այստեղ չկայ խոշոր կալածատիրութիւնը բացի եկեղեցուց և վանքերից, որոնք դարձեալ մի չնչին մեծութիւն են համեմատած Խուսաստանի կալածատիրութեան հետ, մեզ մօտ հողատիրական ձևերը 80 տոկոսով եղել են համայնական: Կան նաև այլ կատեկորիաներ—դրանցից երկրորդը այսպէս կոչւած ժամանակաւոր պարտակի (վրեմենից-օբյանին) հողատիրական ձևեւէ: Բայտ ալդ հողատիրական ձևի գիւղացիներն ունէին նադէլներ 1866 թւի օրէնքի հիման վրա: Երբորդ ձևը դա խիգաններն են համաձայն 79 թւի օրէնքի: Զորքորդ ձևը արէնդատորների սիստեմն է, որ վեցցում էր վանքից կամ կառվարութիւնից: Մրանք են այն ձևերը, որ գոյութիւն ունէին մեր երկրում: Յեղափոխութիւնը մեր առաջ կարականապէս դրեւէ և այդ հարցի լուծումը: Հողային կոմիսարիատը արդէն մշակել է համապատասխան դեկրէտ և Փողկոմների Խորհուրդը նրան իր հաւանութիւնն է աւել, գա հողի պետականացման կամ ազգանացման դեկրետն է: Ռուսականութեամբ սկզբում մշակւած էր հողի

սոցի ալիքացիայի օրէնքը, բայց այդ չկիրառեց իրավանութեան մէջ, այլ աշքի առաջ ունենալով երկրի իրական պահանջները, որոշեց հողեւը ազգայնացման ենթարկել: Ռուսաստանի հողային հարցի համար կատարած այդ տակտիկական պրիումը անհրաժեշտ էր, որովհետև գիւղացիութիւնը բանուրութեան հետ կապելու խնդիրն էր զրւած, որ նախատում էր էս-էլոների և այլ ուժան տարրերի տակից հողը վերացնելու խնդրին: Այժմեան համագումարները Ռուսաստանում աս արդէն ընդունել են հողի պետականացման սկզբունքը, նոյնը կիրառում ենք աւելի լայն ժամանակով Հայաստանում: Մեզ մօտ գոյութիւն չունի ադրաբային հարց, այլ հողային հողաշինարարութեան և հողաբաժանութեան հարց: Հողաբաշխութեան խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է իմանալ թէ թնչ հողային ֆոնդը գոյութիւն ունի մեղնում և երկրորդ, որ այդ հողային ֆոնդը պիտի պահել ոչ թէ համահայկական մասշաբով, այլև գաւառային, գաւառակային և նոյնիսկ զիւղական սահմաններում, այդ աշխատանքը լիովին իրագործում է մեր կողմից: Պէտք է նախ և առաջ որոշել ազգարկանութեան թիւը մանրամասնորէն, ըստ գաւառների, գաւառների և գիւղերի որից յետո միայն կարելի է անցնել հողաբաժանութեանը: Այս աշխատանքը ևս վերջանալու վրա է: Որպէսզի պարզ գաղափար կազմենք մեր հողային ֆոնդի մասին, ևս մի փոքր թւական տեղեկութիւններ կտամ այդ մասին:

Թւերը որոնք բերում եմ ներքին պարունակում են վարելահողերը, խոտհարքները և աշխատները (եայլաղները)

	Վարելահող	Համայնական խոտափուր- արօտներ	Գնուական արօտներ	Գումար
1. Ն.-Շայաղէտի գու.				
2. Երևանի	118,860	157,360	144,786	421,006
3. Ալէք-պոլի (առանց Արտածի)	—		58,268	268,058
4. Էջմիածնի (Արարա- ծի հետ)	104,387	184,591	26,648	315,636
5. Քարալագեազի	73,990	83,990	168,377	325,387
6. Լոռետ	—			192,843
				195,843

Պիտի տաեմ, որ Հայաստանի երեք գաւառների հաշիւները չտնենք, որովհետեւ Զանգեզուրը նոր դրաւած լինելով գեռ և սի ուսումնակարւած, ևսկ Նարաքիլսէւն ու Իջևանը զեռ ևս լեիւ տեղեկութիւններ չեն աւել: Հողաբաժանութեան ժամանակ չպիտի մոռանալ նաև հողի բերքատուութիւնը, որ անհրաժեշտ է եւրաբանչւր ընտանիքի իր տնտեսական և կուլտուրական կարիքները հոգալու համար: Ծնորհիւ կմպերիալիստական և ազգամիջան կոիւների մեր ազգաբնակութեան մի պատկառելի մասը գտնուում է երկրից դուրս: Այդ ժողովուրդը ձգտում է վերաբարեւը, խոտհարքները և աշխատները (եայլաղները)

նաև Հայաստան: Արգէն մօտ օրերս եկան մօտ վեց հազար գալթականներ, ուրեմն այս խնդիրն ես ի նկատի պիտի առնել և մի խոշոր մասը մեր հողային ֆոնդի պիտի թողնել ազատ, առանց բաժանելու որպէսզի նրանց ևս մեր քաղաքային ազգաբնակութեան նման մենք շկերպենք, այլ կապենք հողի ու արտադրութեան հետ: Երկրորդ հիմնական մոմենտը հողաբաժանութեան գործում նորմաների հարցն է: Հողաբաժանութիւնը կատարելու ժամանակ, որպէսզի գիւղացին ոչ միայն տնտեսապէս ապահովի, այլ և հարաւորութիւն ունենա բաւարարելու իր կուլտուրական և հոգեկան պահանջները, անհրաժեշտ է քիչ շատ բարձր նորմանը: Ըստանիքին, որ բաղկացած է 7 հոգուց անհրաժեշտ է 18 գեսեատին հող, որի մէջ մտնում է խոտհարքը և արօտները, որով նա բաւարարի իր անտեսական նաև կուլտուրական պահանջները: Հայաստանի հողային ֆոնդը մեզ այդ համարաւորութիւնը շի տալիս մենք սակաւանդ երկիր ենք և շատ շրջաններում հողացում է կէս, նոյն իսկ քառորդ գեսեատին: Երրորդ մօմենտը հողաբաժանի մի մասը գնալու համար կորցնում է բաւականին ժամանակ ու էներգիա և այսպէս մէկ քառորդ գեսեատինը գիւղի մի ծայրում, իսկ միւսը՝ նոյն քանակութեամբ հողաբաժինը տասնեակ վերստերով հեռու է գտնում առաջւանից, ընական է նման հողատիրութեան ձեռքում անհնար է ստեղծել կանոնաւոր տնտեսութիւն: Օրինակ վերցրեք կոսին և նման մի շարք գաւառները: Մենք մշակել ենք նորմաններ զանազան շրջանների համար, ի նկատի ունենալով տեղի հողային ֆոնդը, պարզ է, որ մենք սիայն ընդհանուր մասշտաբով ենք ընդդեմ նորմանները և առաջարկելու ուղեցումները և հողային կոմիտէներին, որոնք պիտի յարմարացնեն տեղական պայմաններին, եթէ կարիք կլինի մտցնել ուղղութենքը: Աերև յիշածու հողահեռաւորութեան և հողացրւածութեան տննորմալ երեսյթը պիտի վերացնել որովհետեւ հողաբաժանութեան ժամանակ մենք կանգնած կլինենք շափաղանց մեծ գեւարութիւնների առաջ: Ես կցանկանայի շեշտել մի հանգամանք ևս Դաշնակցութեան ստեղծած ազգամիջեան կուլտուրի շնորհիւ զանազան վայրեր ցրւած ազգաբնակութիւնը այժմ վերաբանում է իր աւերած գիւղը և դուք ականատես էք եղել անշուշո, թէ ինչպէս բազմաթիւ գիւղեր ընակեցւած են 6-ից 10 ընտանիքով, երբեմն նաև աւելի քիչ: Սա մի հանգամանք է, որ մեծ խոշընդու է հանդիսանում նրանց թէ աղնատեսապէս և թէ կուլտուրապէս զարգանալուն: Նրանց խմբւած լինելը հնարաւորութիւն կտայ կառավարութեանը օգնութեան հասնել ամեն տեսակի թէ կրթական և թէ տնտեսական մշակութեան գործիքներով, բայց այս բոլորը ոչ թէ հարկադրական և

ստիպութական միջոցներով, այլ սիստեմատիկ ազիտացիայի միջուցով ու կամաւոր ցանկութեամբ:

Ընկերներ, հողային հարցի լուծման ժամանակ, կան նաև մի շաբաթ կարևոր խնդիրներ, Անդրածելա է միաժամանակ լուծել խոռնարքի, այգիների, արօտատեղիների խնդիրը:

Այս տեսակէաը, որ թէ կտավարութիւնը և թէ մեր կոմիտարիա ունի այգիների մասն հետեւալն է: Այգիները բաշխման չեն ենթարկում, այդիների բաժան-բաժան անելը՝ հատելը գերազանցապէս կը վնասի այդ կուլուրային: Ռուսաստանում նոյնիսկ 1918—19 թւուկաններին 8 զենատինից պակաս եղածները ենթակա չէին բաշխման: Մեզանում բաշխման ենթակա լինելու են միայն լինալ և այն այգիները, որոնց տէրերը նոյն տեղում չեն դաշտում:

Արօտատեղիները նոյնպէս չենք բաժանում ազգաբնակութեան չնչի վրա. Նրանք բաժանում են համայնքի լին: Համայնքները կարող են ստանալ միայն ըստ անառուների քանակի և անասնապահութեան զարգացման պահանջի: Մենք այդ բաշխումը այնպէս պիտի կատարենք, որ զարկ տա անասնապահութեան:

Մի այլ հարց, քոչուրների հարցը՝ մի քէչ կցանկանայի կանգ առնել այդ հնգրի վրա: Ինչպէս ենք մօտենում այդ խնդրի լուծման: Մենք հսկողած ենք, որ առնեստական կերպով քոչուրներին արգելելը անկարելի է և անթուլատրելի: Եթե ուսումնամիեւնու լինենք քոչուրների գրութիւնը, մենք տեսնում ենք, որ վերջին 40—50 տարւա բնթացքում նրանց և անասունների թիւը պակասի է, որովհետև նրանք, հետզհնետէ կպել են հողին և աշխատել են հողագործութեամբ զբարկել, և որքն նրանք դաշտավայրում ու ցենեն խնտենսի կուլտուրայի մշակման անքան քոչուրների թիւը կուտարայի:

Սակայն երբ մենք մօտենում ենք արօտատեղիների խնդրի լուծման, մենք չենք կարող թոյլ տալ, որ նրանք տարածւն անսահմանափակութէն: Մենք պարտաւոր ենք վերացնել նաև արօտատեղիների վրա կարևոր լարուցանող խնդիրները, եկուորների և քոչուրների միջև, որը բզիսում է տեղացիների հողագործութիւնից: Մենք հողաբաժնների մի մասը համապատասխան նրանց անասունների թիւի պիտի յատկացնենք քոչուրներին, իսկ մնացածը պիտի յատկացնենք տեղացիներին: Մեր արօտատեղիների քանակը, արդէն հաշվի է առնեած և այս գարնանը ամբարտ կգծեն այդ սահմանները:

Ընկերներ, ես երկար կանգ չեմ առնի հողային հարցի լուծման վրա, ես անցնում եմ հարցի երկրորդ մասին:

Որպէսզի կարողանանք երկրագործութիւնը դարձացնել, մենք նախ պիտի ուսումնասիրենք, թէ ինչ միջոցներով անհրաժշտ է կուլտուրան բարձրացնել մեր երկրում և կուլտուրայի նոր ձեերը:

Տալու համար իրական պատկերը այդ տեսակէտից խօսենք թւերով, վերցնենք երկրագործութիւնը դարձացնել, դաշտային և նախալեռնային:

Դաշտային շրջաններում ստացւած արդիւնքը տալիս է համեալ պատկերը.

### ՏԱՐԱԾՈՒ

№ 1

Հայքաստանի ԴԱՏԱՑԻՆ ՀՐԱՄԱՆՈՒՄ մի դեմակինութիւնուի տակ որպէս համառավական բարձրացնելու և որպէս իրական պարագաների համար:

Բաժ մ բ ա կ	Խ ա զ ո ղ ո ղ	Յ ա զ ո ղ ո ղ	Գ ա զ ո ղ ո ղ	Պ ա զ ո ղ ո ղ	Ա ռ ո ղ ո ղ
Հողի հերթիւն գումարունու	10	Արդին թաղելը 35 ր:	21	Արդին հերթիւն գումարունու	10
Հերթիւն կը կարունը արթուրունու	4	Արդին կը կարունը արթուրունու	4	Արդին հերթիւն գումարունու	10
Ջանել, գումարունը առաջ ու առաջ	3,50	Ջեղս առ. բարձր 12 ր:	30	Ջեղս առ. բարձր 12 ր:	15
Գանել, գումարունը առաջ ու առաջ	4,50	Ջեղս առ. բարձր 5 ր:	3	Ջանել, գումարունը առաջ ու առաջ	3,50
Մերժը 6 կ. բարձրունու	70 կ.	Բարձր. 60 կ.	16 ր:	Մերժը 6 կ. բարձրունու	1
Քեան 70 կ. բարձրունու	3	Բարձր. 60 կ.	9,60	Քեան 70 կ. բարձրունու	15
Զեղու 4 զազը. 70 կ.	3	Արդին կը կարունը 35 բարձր.	3	Զեղու 4 զազը. 70 կ. բարձրունու	15
Նորացի պատճեան 60 բարձր-	18	70 կ. բարձր. 35 բարձր.	8 ր:	Նորացի պատճեան 60 բարձրունու	3
մասպատճեան 30 կ.		Արդին բարձրունու 5	6 ր:	մասպատճեան 30 կ. բարձրունու	6
Բերքի հասարիւն 60 բարձր-	18	Արդին բարձրունու 5	75 կ.	Բերքի հասարիւն 60 բարձրունու	6
մասպատճեան 30 կ.		Արդին բարձրունու 12 ր:	29	Արդին բարձրունու 12 ր:	4
Արդին բարձրունու 1 40 6		Արդին բարձրունու 12 ր:	6	Արդին բարձրունու 12 ր:	12
Գործիւն գործունու	5	16 ր:	1 40 6	Արդին բարձրունու 12 ր:	12
Բարձրունու 5 քարծունու	5	Արդին բարձրունու 30 ր:	6	Արդին բարձրունու 12 ր:	12
Բարձրունու 5 քարծունու	5	Արդին բարձրունու 30 ր:	12	Արդին բարձրունու 12 ր:	12
Բարձրունու 1 40 6		Արդին բարձրունու 15 ր:	15	Արդին բարձրունու 15 ր:	15
Բարձրունու 1 40 6		Արդին բարձրունու 15 ր:	15	Արդին բարձրունու 15 ր:	15
Ուղիղ գումար 83,20		150,10 Մի դամական ծախս	61	Ուղիղ գումար 83,20	58
Վաղուց բարձր 18 գ. բարձր-		Ուղիղ գումար 83,20	75 ր:	Վաղուց բարձր 18 գ. բարձր:	60 գ.
մասպատճեան 12 ր.	216	Բարձր. 60 կ.	270 ր:	Վաղուց բարձր 18 գ. բարձր:	72 ր.
Բարձր. հունիւն 40 գ. բարձր-	28	Բարձր. 3 ր:	6 մայ:	Վաղուց բարձր 18 գ. բարձր:	15 ր.
մասպատճեան 20 կ.		Բարձր. 5 կ.	15 մ:	Վաղուց բարձր 18 գ. բարձր:	15 ր.
Արդին գումար 291 ա.		Արդին գումար 291 ա.	87 ա.	Արդին գումար 291 ա.	87 ա.
160,80 Զուտ արդիւնք		140,30 Զուտ արդիւնք	26	Արդին գումար 160,80 Զուտ արդիւնք	130 ա.

Նախարարություն ՀՀ շահութանք առևի է հետևող չափով

ՀՊԱՅՑԻ Նախարար ՆԱԽԱՐԵԲԱՆՔԻ ՏԱՐԺԱՆ ՀՈՂԱ ՏԱՐԺԵՔԻ ահանում մի դեսեատին հողԱ տարժեք արդինք է տալիս.

Հ 2

Բաժբակ	Կառավարություն	Համար պահանջ	Վարչություն	Համար պահանջ	Վարչություն	Համար պահանջ	Վարչություն
Հերկերի ու գործադրություն	Հերկերի մասնակից առաջարկություն	10	Կառավարություն պահանջ	24	Հերկերի գործադրություն	10	Համար հերկերի գործադրություն
Համար պահանջ	Հերկերի պահանջ	4	Հերկերի պահանջ	16	Հերկերի պահանջ	4	Համար հերկերի գործադրություն
Ջանակություն	Ջանակություն պահանջ	4	Համար պահանջ	30	Հերկերի պահանջ	18-75	Հերկերի պահանջ
Դաշտականություն	Դաշտականություն պահանջ	2	Համար պահանջ	95 կ.	Հերկերի պահանջ	15-14 ա.	Հերկերի պահանջ
Մարդու աշխատանք	Մարդու աշխատանք պահանջ	60 կ.	Համար պահանջ	60 կ.	Համար պահանջ	2-30	Համար հերկերի գործադրություն
Հարցություն	Հարցություն պահանջ	20	Համար պահանջ	12 բազմ.	Համար պահանջ	1-50	Համար հերկերի գործադրություն
Հարցություն	Հարցություն պահանջ	4-50	Համար պահանջ	8 բազմ.	Համար պահանջ	1-50	Համար հերկերի գործադրություն
Հարցություն	Հարցություն պահանջ	15	Համար պահանջ	50 կ.	Համար պահանջ	12 Համար պահանջ	3 ամիս
Հարցություն	Հարցություն պահանջ	40	Համար պահանջ	4 բազմ.	Համար պահանջ	3 Համար պահանջ	3 ամիս
Հարցություն	Հարցություն պահանջ	2	Համար պահանջ	20 բազմ.	Համար պահանջ	4-50	Համար պահանջ
Հարցություն	Հարցություն պահանջ	4	Համար պահանջ	10 բազմ.	Համար պահանջ	3 Համար պահանջ	9
Հարցություն	Հարցություն պահանջ	5-50	Համար պահանջ	100	Համար պահանջ	10	Համար պահանջ
Հարցություն	Հարցություն պահանջ	74-60	Մի դեռ. համար ծախս	129-20	Մի դեռ. համար ծախս	60-2	Մի դեռ. համար ծախս
Հարցություն	Հարցություն պահանջ	114	Մասնակի համար ծախս	250	Մասնակի համար ծախս	60	Մասնակի համար ծախս
Հարցություն	Հարցություն պահանջ	18-20	Վարչություն պահանջ	250	Վարչություն պահանջ	60	Վարչություն պահանջ
Հարցություն	Հարցություն պահանջ	70 կ.	Վարչություն պահանջ	5 ս.	Վարչություն պահանջ	10	Վարչություն պահանջ
Հարցություն	Հարցություն պահանջ	87-60	Մի դեռ. մասնակի համար ծախս	162-20	Մի դեռ. մասնակի համար ծախս	75	Մի դեռ. մասնակի համար ծախս
Հարցություն	Հարցություն պահանջ	87-60	Համար պահանջ	138-80	Համար պահանջ	13-50	Համար պահանջ

Նախարարություն շըշանում արդէն դուք տեսնում էք, որ այդպործութիւնը աւելի լաւ և դերագունց արդիւնք է տալիս քան բամբակագործութիւնը և հացահատիկների կուլտուրան և ընդհակառակը. Եթէ այս տեսակէտից մօտենանք, մենք պիտի որոշենք, որ նախարարություն և դաշտային շըշանում պիտի զարգացնենք բամբակագործութիւնը և այդպործութիւնը. Անցնենք այդպործութեանը: Ես ձեզ կտամ թւեր, որոնք վերաբերում են նախապատերազմեան շըշանին, որովհետև ներկա թւերը անորմալ պայմանների արդիւնք են:

Նախարարութեապեան շըշանում այդպործների թիւն էր 11,370 այդիների քանակը 7819 դեստալուն:

### Արդիւնք ստացուում էր

	Կոնեակ	Ապիրուտ	Գինի	Խաղող
Արար բերբեր սարին	7,248,000%	9,400,000%	1,000,000 դ.	3,500,000 պ.
Վարչություն	4,167,000%	5,800,000%	500,000 դ.	2,000,000 պ.
Միջամակ	6,000,000%	6,500,000%	800,000 դ.	2,700,000 պ.

Ներկայումս ունենք հետևեալ թւերը  
Բարոտ կրանող շըշան—3640 դեստալուն  
Հարթավալյլ բերբեր—2897 »  
Ընդամենը—6537 դեստ.

Այսպիսով դուք տեսնում էք, թէ ինչպիսի հսկայական աբնութեական գործօն է մեր երկրում այդպործութիւնը:

Դուք տեսնում էք, նոյնպէս որ ազգաբնակութիւնը թողել է իր այդիները անմշակ և հետացել: Մնացած այդիները իրեն ինտենսիվ կուլտուրա, հարիւրին յիսուն առկոսը արդիւնքը, պակասել է որպիսիուն հստարաբութիւն չի եղել թաղել և զարգացնել այդիները:

Ի՞նչ միջոցներ է ձեռք առել և առնում է կառավարութիւնը ներկայիս և տպագյուղում: Մենք աշնան ձեռք առինք միջոցներ, բաց թղթինք 15 միլիտր, այդիները թաղելու և մշակելու: Համարավունք և երեանի շըշանում աշնան, արդէն թաղւած ևն այդիների հարիւրին 80-85 տոկոսը: Միջին թւով թաղւած ևն Հայաստանի այդիների 50 տոկոսը:

### Անցնենք բամբակագործութեան

Բամբակագործութիւնը, շնորհիւ դաշտական կառավարութեան ապիկարութեան չի շահագործւել և դարպանել, այն

Յիշնովին ոչնչացնել է։ Նոխապատերազմեան շրջանում երեսնի նահանգը տալիս էր տարեկան 600,000 փութ բամբակ, և 1,200,000 փ. հունդ։ Որովհետև հին կառավարութիւնը յայտարարեց մոնոպոլիա, և այն էլ նշանակելով դին 42 բուրլի ի դիմաց 82 բուրլու ծախքի, որ անում էր գիւղացին, դրա համար գիւղացին հաշւում էր բամբակի արդիւնքը ցանքսի հետ և արդիւնքը ստանում էր վնաս։

Մեր կոռավարութիւնը, նոր գեկրետով յայտարարել է ա. մոնոպոլիան վերացած, բ. նորմաներից դուրս ազատ հողեր տալ գիւղացուն և գ. խոշոր վարկ բաց թողնել։ Բամբակագործներին տալիս ենք 50 ըուբլի ոսկու վալիւտայով փոխառութիւն։ Ինչպէս նաև աշխատող մշակներին կերտելու համար ցորեն իւրաքանչիւր դեսեատիւնին 10 փ. և սերմացու։

Այս միջոցներով բամբակագործութիւնը հետզհետէ զարդանալու է մեր երկրում, ահա այն, ինչ որ արւած է այս շըրջանում. սակայն ես ձեր ուշադրութեան պիտի յանձնեմ նաև ծխախոտագործութեան խնդիրը. ճիշտ է, որ մենք չկարողացանք այս տարի լայն զարկ տալ այս կուլտուրային, սակայն ինչ որ մենք արխինք այս տարի, գրաւական է ծխախոտի լայն զարգացման մեջանում։ Մի քանի տեղ արւած փորձերը մեր ստացած ծխախոտի բերքի որակի տեսակէտից տւին դրական հետեանքներ և ծխախոտագործութիւնը թէկ նոր, սակայն մեծ ապագայ ունի մեղանում։ Իրեն հիմնական խնդիր մեր առաջ դրւած է ջրի հարցը։ Հայաստանում արհեստականօրէն ջրւում է 160,000 դիսեատիւն և Սրաբատեան գաշտավայրը պատած է ջրանցքներով, վերցրէք այդ ջո. ըը, և կուլտուրան հիմովին կոնչանա։

Անցեալ տարւայ ընթացքում, մենք հնարաւորութիւն ենք ունեցել նորոգել 18 ջրանցքներ, հետեալ գարնան մենք նորոգելու ենք 38 ջրանցքներ, որի նոխապատրաստական աշխատանքները սկսւած են։ Ի հաջիէ կառավարութիւնը ի վիճակի չէ այս բոլոր ծախսերը հոգալու. անհրաժեշտ է ազգաբնակչութեան մասնակցութիւնը։ Համագումարը՝ համոզւած եմ ոչ կիրահանգի տեղական ազգաբնակութեանը լայն մասնակցութիւն ցոյց տալ այս գործի կազմակերպմանը, նոր ջրանցքներ կիտուցմէն երկու հատ։

Կառավարութիւնը հրահանգել է մեր կոմիսարիատի և Ժող. Տնտես. Խերհրդին, էջմիածնի Ջրանցքը վերջացնել մինչև այս ամառ նոյնպէս պիտի աշխատենք արագացնել Ալէք-պոլի ջըրանցքի կառացման գործը, որը որոգելու է 18,000 դիսեատիւնի, և որի կառուցումը կպահանջի մի տարւա աշխատանք։ Ինչ վերաբերում է Սարդարաբթի ջրանցքին մեր միջոցներով երկի հնար չի լինի կառուցանել մօտ ապագայում այստեղ առնբաժեշտ է կիրառել կոնցեսիոն սիստեմը։ Ալսքանը բարձր կուլտուրայի

դիջանի մասին։ Հացահատիկների մասին՝ ընկերներ, բաւական չի, որ հողաբաժանումներ կատարելով, բաւարարւած համարենք։ Ցանքսի տեսակէտից անցեալ տարի անմիտթար վիճակի մէջ ենք եղել։

Գաւառներից մի քանիսը հազիւ թէ ունեցել են իրենց ցանքսերի մէկ երրորդ մասը համեմատած նորմալ տուրքերին։ միւսները մէկ չորրորդը և մի քանիսը 50 տոկոսը։ Բնական է ուրեմն այսպիսով սովը անխուսափելի պիտի լինէր։ Անհրաժեշտ է ունենալ զիւղատնտեսական ինվենտար։ Մեր շատ զիւղեր ունեն միայն 3—4 զոյգ լծկաններ։ Անհրաժեշտ է ազգաբնակութեան տալ սերմացու, գութան, գործիքներ։ Մենք չունենալով լայն ընտրւաներ, մենք տւել ենք 60,000 փ. ցորեն իրեմացու։ Գալիք գարնանացանի համար մեր տրամադրութեան տակ ունենք 100,000 փութ սերմացու, շուտով կստանանք ևս 40,000 փութ, իսկ Ռուսաստանից 100,000 փութ։ Նորմալ պայմաններում, նախքան պատերազմը, Հայաստանը ստանում էր գրախցուն փութ հաց։ Այսպիսով որպէսզի մենք կարողանանք չնեղւել, պիտի ընդարձակենք ցանքսերի հողերը, 100,000 դիսեատիւնով, որի համար անհրաժեշտ է 100,000 փութ սերմացու։ Ի հարկէ այս քանակը ունենալ չենք կարող, եթէ ընդդրւած երեք հարիւր հազար փութը հացնենք ազգաբնակութեանը, գա կիամարտի լոււգոյնը։

Ազգաբնակութիւնը երկի իր կողմից էլ կանցնի, իւր միջոցներով, իւր ունեցած սերմացուվ գարուցանքսի գործի կազմակերպման։ Մեր առաջ դրւած են նաև լծկանների և գործիքների մատակարարման խնդիրները։ Բաժանել ենք չքաւոր ազգաբնակութեան 2400 զոյգ անտառներ, չնաշւած պիտակոնն հիմնարկութիւններին տւածը։

Ինչ վերաբերում է անասնապահութեան, ես պիտի ասեմ, որ մեր լեռնալին ըրջանները (Լոռի, Նոր-Բայազէտի ևայլն) եթէ համեմատենք Շվեյցարիայի և Հոլլանդիայի անասնաշատ ըրջաններին, յիշեալ ըրջանների անասունների քանակը աւելի բարձր է։ Սակայն որակի խնդիրը չափազանց ողորմելի է։

Դուք գիտէք, որ մեր երկրում, հոգ չի տարւաւ անասունների սրակի բարձրացման վրա։ Եւրոպայում հիմնաւորապէս հոգ են տանում պատրաստելու անասունների համար կիր, որի շնորհիւ ամբողջ տարին ստացւում է կաթ, այն ինչ մեր երկրում 3 ամիս միայն կարելի է ստանալ արդիւնք անասնապահութիւնից։ Մենք չենք կարող անասունների ցեղը ազնւացնելու համար, Շվեյցարիայից թերել տալ ազնւացած անասուններ։ Այդ փորձը կատարել են եւրոպացները մեղանում, մենք պիտի ազնւացնենք մեր անասունների ցեղերը մեր ունեցած անասուններ։

բով։ Ցեղական անտունների աղնւացման համար մենք սահենք շ ֆերմաներ։ Մենք պիտի ունենանք նույն ուրիշ պունկտեր, անտունների որակը աղնւացնելու համար։

Ամենահիմնական խնդիրը կերի կազմակերպման խնդիրն է։ Լեռնային շրջաններում, միաժամանակ զբաղւում են հաշտատիկների մշակութեամբ։

Դուք տեսնում եք, որ այն շրջաններում, ուր միաժամանակ զբաղւում են և անտառապահութեամբ և հացամշակութեամբ, սահանում են ցանած հացահատիկի հազիւ մէկին երկու։ Պէտք է գիւղացուն հասկացնել, որ նա պարապի միայն անտառապահութեամբ և կերի պատրաստելու գործով։

Միմիայն նման ձեր անտառապահութիւնը կտա իուզոր արդիւնքներ։ Գիւղացուն այս բոլոր հասկացնելու համար, անհրաժեշտ են ամենից առաջ գիւղատնտեսական դպրոցներ։ Մենք յառաջիկա տարում կունենանք տարրական և միջնակարգ դպրոցներ կաթնատեսութիւն և գիւղատնահսութիւն սովորելու համար և նրանք արդէն իր ականացման վրա են։ Երկուրդ խնդիրը, մեր խորհրդույն տնտեսութիւնները և փորձագաղերն են։ Նրանք ուղեցոյց պէտք է լինեն գիւղացուն։ Մենք, մեր ունեցած ու ուղիոնալ տնտեսութիւններով ցուցահանում ենք գիւղացու առաջ օրինակելի անտառութեան ձեւերը։

Սակայն ընկերներ, դուք գիտեք, որ մենք մեր հողային նորմայի և հողաբաժանման միջոցներով ժամանտկաւորապէս դարձ ենք տալիս մանր տնտեսութիւնների։ Սակայն մեր իգէտլը—հիմնական նպատակը չէ, այլ նրանց կազմակերպել և հասցնել կուլտիւ տնտեսութիւնների։ Այդ մեզ կը յաջողուի կոմունայի, արտեների և կոռպէրացիայի միջոցով։

Կոմունայի ցանկութիւնը սկզբում, հիւանդագին դարձաւ մեր մէջ։ Սկզբում 5—10 հոգի միանալով, ցանկանում էին ստանալ լաւ վարելանոլ և սերմացու։ Բայց մենք կարիք չունենք այդպիսի կոմունաների, որոնք վարկաբեկում են կոմունայի գաղափար։ Անհրաժեշտ է բիշ թւով ստեղծել կոմունաներ և արտեներ, բայց նրանք լինեն կազմակերպւած և որակով բարձր։

Ամենից կարևորը կօօպէրացիայի հարցն է։ Դուք գիտեք ընկերներ, որ կարեւոր կօօպէրացիան մեր երկուում «Հայկօօպան» է։ Կառուվարութիւնը կանգնած է միամսնական կօօպէրացիայի սկզբունքի վրա։ «Հայկօօպ» արդէն բաց է արել իր գիւղատնտեսական կօօպէրացիայի բաժանմունքը, և նա երեխ շուտով ընդլայնելով իր գործունէութիւնը, պիտի ձեռնարկի գիւղատնտեսական լայն գործունէութեան։

Թէ գիւղական թէ բաղաքային արդիւնաբերութեան շրջանում մենք ունենալով մեր ձեռքը խոշոր արդիւնաբերական տնտեսական միջոցները, և տունութը, այդ անտեսական ֆակտութերով պիտի կուենք բուրժուական մեթոդների անհատական

կապէտալիստական ձեռնաշկութիւնների գէմ։ Նոյն պիտի կատարւի գիւղում կօօպէրատիւի միջոցով։

Մեր գլխաւոր հոգու առաջիկա գարնանը սովի հարցն է։ Մենք զբաղւած ենք վերացնելու այդ կարիքը։ այն, ինչ ո՞ր երկացել է այս տարի, մի քանի շրջաններում, դա հնարաւոր է բաղթել առաջիկա գարնանացանի լայն կազմակերպմամբ։

Ես համոզւած եմ, որ մեր քայքայւած երկրի վրա, համագումարից յետո մեր ձեռնարկելիք միջոցներով, մենք պիտի վերացնենք մեր նորաստեղծ բանորագիւղացիական հայրենիքը։ (Ծափեր)։

Նախագահ. — Ընկ. Երգնկեան, առաջարկում եմ թարգմանել ուսերէն։

Ընկ. Երգնկեանը իր զեկուցումը համառօտ ներկայացնում է բանաւոր ուսերէն լեզով։

Նախագահ. — Թուրքերէն թարգմանելու համար խօսքը պատկանում է միւսիւրման պատգամաւոր ընկ. էֆէնդիկին։

Ընկ. էֆէնդիկ, թուրքերէն լեզով տալիս է ընկ. Երգնկեանի ճառի բովանդակութիւնը։

Նախագահ. — Ընկերներ, ուշ լինելու համար, նախագահութիւնը օրոշել է փակել ներկա նիստը։

Երկրորդ նիստը փակում է կէսօրւա ժամկի 3 և կէսին։

## Պ. Կ Ի Ս

Նիստը բաց է անում ընկ. Աւխար. — Ընկերներ, Հայտառանի խորհուրդների համագումարի երրորդ նիստը յայտարարում են բացւած։ Հողժողկոմ ընկ. Ա. Երգնկեանի զեկուցման մասին խօսք արւում է ընկ. Մելիք-Յովսէփիւնին. — Հկա-Խօսքը արւում է ընկ. Գ. Յարութիւնեանին։

Գ. Յարութիւնեան. — Ընկերներ, մեր առաջ դրւած է հողային ցանոտ հարցը, որի լուծման համար մենք բարու պէտք է միահամուռ ջանք ի գործ գնենք։ Սակայն անհրաժեշտ է սի յետադարձ հայեացք ձգել գէպի անցեալու և տեսնալ, թէ ինչից ու ինչպէս նա առաջար ու։ բնու Երկօլայի կառավարութեան ժամանակ և նրանից առաջ աշխարհակալ իշխանութիւնը դրել էր իւր թաթը հոլի վրու։ հողը սկսւեց խւել և բաժանել կամայականութէն, որի հետանքով տանեսական մեթոդների անհատական

**Թիւնը:** Հողերը պատկանում էին կալւածառէրերին, մինիսարներին և սրանց մօտ կանգնած մարդկանց, իսկ աշխատաւոր գիւղացիութիւնը հետզնետէ հողի սակաւութեան պատճառով մեծ զրկանքների էր ենթարկւում։ Սակայն հողային հարցը մինչև այժմ էլ անլուծելի է մասցել, թէև տարբեր ժամանակ և զանազան կառավարութիւններ խոստումներ տւին։ Ռուսաւտանում կերենսկու ժամանակ խոստումներ եղան, թէ հիսնադիր ժողովի միջոցով հող կտրւի, սակայն խօսքը մնաց խօսք, իսկ ժողովուրդը այդ տեսնելով իւր զործք առաջ տարաւ և խորտակեց իրեն անհարազատ իշխանութիւնը։ Դրանից յետո Հայաստանում դաշնակցական պարլամենտը և նրա կառավարութիւնը նոյնպէս խոստումներ տւին, բայց էլի բան դուրս չեկաւ (ձայն տեղից՝ «խօսեցէք ըստ էութեան»)

Նախազանի Տեղից նկատողութիւններ չանել, եթէ ալէտք լինի նախագահը այդ կանի։ Ընկ. Յարութիւննետն շարունակեցք։

Յարութիւննետն, (շարունակում է).— Այժմ, երբ այստեղ հաւաքւել են բանւորա-գիւղացիական ներկայացուցիչները, մենք հողային հարցի առթիւ պիտի տսենք մեր խօսքը և խնդրին լուծում տանք։ Մենք գիտենք, որ հողարաժանութիւն կատարելիուն նրանից յետո մշտական արդարութիւն լինել չի կարող։ Եթէ այսօր կամ վաղը մեզ յաջողէր արդար հողարաժանութիւն կազմակեր, նա մի քանի ժամանակից յետո կդադարէ այդպիսին լինելուց, որովհետեւ աշխատող ձեռքի ու ուտող բերնի մի ընտանիքի մէջ մենակը կամ ծնւելը փոխելու են հանդամանքները և նորից առաջ է գալու հողային անտրդարութիւն։ Մինչև մեր նպատակին համար ալէտք է առ այժմ հարցը կիսամիջոցներով լուծել՝ տալով հողագործներին հող և օժանդակել, որ ցանքսերը կատարւին։ Պէտք է աշխատաւոր գիւղացիներին յանձնել գիւղերում եղած մասնատիրական այն հողերը, որոնց տէրերը լըծկանների պակասութեան պատճառով չեն մշակւում։ Անմշակմացած հողերը պէտք է մշակւեն և դա օգտակար կինի թէ գիւղացիութեան և թէ հանրապետութեան համար։ Տեղային հողային բաժինները շատ քիչ կամ ոչինչ չեն կատարել, նրանք աւելի շուտ ունեսորներին տւել են նաւթուլսներ, որոնցով ունեւորները ցանցապատել են իրենց հողերը։ Տեղական հողային բաժինները շատ չնշին ուշադրութիւն են դարձրել, օրինակ մեր Հաղախում մեղաքարուծութեան վրա, չնայած այն բանին, որ կան յատուկ հրահանգիչներ, որոնք այս գործում գիւղացիներին օգնութեան չեն հասել, չեն սովորեցրել մեղաքարուծութեան և ցանքսի նոր ձևեր։ Իմ կարծիքով Կազմակի ու Շամշադինի շրջաններում նախկին օրորուայ շտամպ կազմող հողերը անմիջապէս պիտի բաժանել, որովհետեւ նախ այդ հողերի կարիքը կա և ապա

այդ հողերից կարելի և արդէն ստացւում է տամնապատիկ շատ կարտօֆելի բերք։ Հողային հարցը ոչ թէ հողի պակասութեան մէջ է, այլև նրա բաժանման ձեր մէջ է։ Ինձ թւում է, որ ապահովագրական միութիւնների միջոցով հնարաւոր կլինի կազմեղծել գիւղացիների միջն, որով հետզնետէ նրանք կվարժւեն կոմունալ վար ու ցանքսի սկզբունքներին։ Ապահովագրական միութիւններից երաշտի կամ անբերիութեան տարիներին տուժածները կստանան նպաստ նատուրայով։ Ցամենայն դէպս մենք այստեղ պէտք է մի որոշում ընդունենք հողաբաժանութեան մասին, որպէսզի մենք մեր զիջեցնալ գիւղացիներին առաջին հարցին՝ «թէ ի՞նչ եղաւ հողի հարցը», մենք պատասխանի խօսք, մի ուրախ լուր ունենանք նրանց ասելու։

Գր. Զուրաբեան. — Իմ կարծիքով սա մի համագումար է, որ հողային ընդհանրապէս բոլոր հարցերին սկզբունքային լուծումն պիտի տա, որով յետագայում գործադիր էշխանութիւնը պիտի առաջնորդւի։ Սակայն կանգ պիտի առնեմ մի երկու հիմնական թերութիւնների վրա։ Մինչև կերջին ժամանակներս յայտարարելով հանգերձ, որ մեր տնտեսութեան հիմքը կազմում է գիւղատնտեսութիւնը և հետևաբար այն պէտք է պահպանի, իրականութեան մէջ սակայն ուրիշ բան է արտայայւել։ Գիւղացին և նրա լծկանները հանգիստ չունեն, ամբողջ ժամանակը նրանք անցնում են փոխադրական պահկութիւնների է ենթաթարկում գիւղացին, իսկ լծկանները հիւծւում ու մաշւում են։ Հազիւ մի պահկութիւնից ազատուած և տուն վերագանակու յոյտվով մի քանի քայլ արած, ահա նրան նորից, այս անգամ ուրիշ միլիցիօնէր բռնում է զօռով և նորից աշխատանքի տանում։ Պատահել են զէպքեր, երբ Սխտայից սայլերը բարձւած եկել են, գատարկ վերադրձել, որից յետոյ յիշել է իշխանութիւնը, որ երկանից Սխտա տանելու բան կար, և ահա սայլերը այս անգամ Սխտայից պարագ զալիս են երևան մոսացքած բեռները փոխադրելու... Այս գործը պէտք է կանոնաւորել և պահկութիւնը որոշ միջոցներով սահմանաւորել։ Մի ուրիշ հիմնական սխալ է հողմողլումի կողմից, երբ նա համաձայնում է ընահարկ գանձել այն փեթակներից, որոնք ամբողջովին կազմւած են առաջին տարին մեղը հաւաքով մեղուների ձափերի փեթակներից, կամ ձագ ունեցող փեթակները բնաստուրքից աղատուում են՝ մեղւարուծութիւնը բարձրացնելու նպատակով։ Բնատուրքի մասին հրամարակւած գիկրէտանները մեղանում պարզապէս թարգմանութիւնն են մուսատանում լոյս անուածների, իսկ մեղւարուծութեան վերերեալ գիկրէտը մեղանում խմբագրելիս միտամարփողիացիայի

է ենթարկւել... Ինձ թւում է նման զեկը էաներ հրատարակելուց առաջ աւելորդ չեր լինի լսել պիտղացու, գործին մօտ կանքնած մարդու կարծիքը:

Նահգեալիեան.—Ընկերներ. եթէ ընկ. Չուրարեանը իր ճառ-ը արտասանելուց առաջ հետաքրքրէր և նայէր անկետային թերթիկները՝ պիտի տեսնէր, որ մենք ունենք մեր սկզբունքը այստեղ շօշափող հարցի վերաբերմամբ, և որ այդ սկզբունքը կուլակային չեն: Եթէ եղել են թերութիւններ և բացեր հողժողկոմատի գործունէութեան մէջ, դրա սեղքը չի ընկնում հողժողկոմի վրա. մենք պիտի մեղագրենք մեզ, որ մենք մեր ուժերը բաւարար չափով չենք տւել հողժողկոմին, այն պարենային գործին ամբողջովին տրամադրած լինելու պատճառով: Այժմ և սրանից յետոյ մեր բոլոր կուսակցական և այլ ուժերը պիտի դարձնենք այս կողմը և աշխատենք գիւղացու անտեսութիւնը բարձրացնելու վրա: Կրկնում եմ, մեղքը հողժողկոմինը չէ:— Զքաղեցնող և հրատապ ինդիք է հողաբաժանութեան գործը և նրա արդար իրականացումը, որ, սակայն, թեթև բան չի: Հողա-բաժանութեան համար աշխատանքներ տարւել են, բայց նրանք քանակով քիչ են և որակով ցած: Եւ այս աշխատանքների գըլ-խաւոր թերութիւնը այն է, որ կեանքից ու միջավայրից հեռու են եղել, պէտք է կեանքին մի քիչ աւելի մօտ, գործնական լի-նել: Մինչև այժմ ստուգապէս յայտնի չէ, թէ որ գիւղը բնչքան և բնչպիսի հող ունի: գաւառներ կան, ուր հողաչափներ անգամ չկան: Սուաջ իւրաքանչիւր գիւղ ունէր «տափթար», որի մէջ գրւում էր, թէ այս ինչը ունի այսքան, այն ինչը այնքան և այլ սակայն, այդ «տափթարները» այժմ չկան, չեն մնացել՝ կամ կորել են, կամ շատ խորը տեղերում պահւած են: Այս բացը վերացնելու ամենագիւրին միջոցը կլինի, իմ կարծիքով, գիւղա-տնտեսական գալքոցը, որտեղից գուրս կգային գիտակ հողաչափ-ներ:— Երկրորդ կարևոր խուրը առաջիկայ գարնանային ցանք-սերի հանցն է: Զեկուցող ընկ. Երդնկեանը այս առ-թիւ ասաց, որ աշխանացանի նման գարնանացանքսի աշխա-տանքներն վար ու ցանւած հողերի քանակը պիտի լայնացնել և ասաց, որ արտասահմանից և այլ գայրերից ստացւելիք սկրմա-ցուի քանակը կհասնի մօտ 250 հազարի, իսկ այդչափ մենք կունենանք 2 ամսոից: Ինձ թւում է, աւելի լաւ է մենք մեր հա-շիւները տեսնենք ու չափենք նազդ ունեցած 120,000 ֆ. սկրմա-ցուի վրա և աշխատենք միջոցներ ձեռք առնել, որ սկրմացուն իւր ժամանակին փոխազրւի այն կենարունները, որոնց շրջան-ներում ցանքսերն են կատարելու: Եթէ այդ գործում ուշա-նանք՝ տանուլ կտանը: Եղած սերմացւի քանակը աւելացնելու համար ամենից առաջ պիտի նայինք մեր ներքին շուկան: Այս-տեղ մենք կտեսնենք, որ հացահատիկը՝ ուրեմն սկրմացուն ա-

զացւում և ուտուում է. այն ինչ հսարաւոր է ստացւող ալիւրը փո-խանակել սկրմացւի հետ և վերջիններս ամբարել առաջիկայ ցանք-սերի համար: Այս բանից մենք ի վիճակի կլինենք ստանալ մօտ 130 հազար փուլի, որով կունենանք պահանջւած 250 հազար փուլը: Յատուկ ուշազրութիւն պիտի դարձնել անասնապահու-թեան վրա. մեղ մօտ խնդիրը շատ չպիտի քննել անասունների ցեղը ազնւացնելու տեսակէտից: Կա աւելի հրատապ անհրաժեշ-տութիւն՝ պէտք է անստունների միջից վերացնել խոշոր ծաւա-լումն ստացած էպիդիմիկ հիւանդութիւնները, պէտք է եղածը պահպանել: Ընկերները, փոխազրական միջոցների պահկութիւնը ինքնըստինքեան ծանր լինելուց բացի, ծանրանում է զիւղա-ցիութեան վրա նաև այն հանգամանքով, որ այդ գործի պաշտօ-նեանները անբարեխիղն են մեծ մասամբ: Այդ մասին հրատա-րակւած գեկրեալ տառում է, որ ձմեռուայ ամիսների ընթացքում գիւղացին իւր սայլով ու լծկանով պահկութիւն է անում 30 օրից 7-ը, իսկ ամառային ամիսների ընթացքում 30-ից 3 օր: Պահկութեան այս միջոցը մեծ է և ծանր և ինձ թւում է, որ, երբ մենք արդէն կիրառում ենք սնտեսական նոր քաղաքակա-նութիւն՝ պէտք է պահկութեան միջոց սահմաննենք տարեկան 6 օր, ինչպէս դա մրուստանում վերջերս ընդունւած է: Սա մեծ թեթևութիւն կրերի գիւղացիութեանը և մենք կունե-նանք նաև սոոզջ լծկաններ: Զեկուցողը ասաց, որ մեր գիւղա-ցիութեան համար պատւիրւած է արտասահմանում 2000 գու-թաններ, բայց հասաւատ յայտնի չէ, թէ երբ կստանանք: Մենք կարող ենք ամեն մի գաւառում բաց անել 2—3-ական արհես-տանցններ գիւղացիների մօտ եղած կարկատանքի կարօտ երկ-րագործական գործիքները նորոգելու համար: Այդ մենք կարող ենք ավելի անենք այս ամիսներին, երբ գիւղացին պատ-րաստութիւններ է տեսնում առաջիկայ վարի ու ցանքսի հա-մար: Ահա այս փոքրիկ գիւղացիութիւններս իրագործելու դէպ-քում սա մեծ նշանակութիւն կունենայ դրւած ինդիրների ուուծման համար: (Ծափեր):

#### ԸՆԿ. ԼՈՒԿԱԾԻՆԻ ՇԱԽԸ

Ես չեմ լսել չողժողկոմատի գուծունէութեան և հողային հարցի մասին եղած գեկուցումը, սակայն ծանօթ լինելով երկրի դրութեանը ես ուղում եմ խօսել մի քանի հիմնական կէտերի մասին, Ընկերներ, մեր երկրի գործնական շինարարութեան հա-մար անհրաժեշտ է ունենալ ստոյդ թւական տեսեսու-թեան զանազան ճիւղերի վերաբերեալ: Առանց այդ թերի ան-համար է առաջիկայ գործունէութեան համար մշակել հիմնական ծրագիր: Այստեղ ասում են, թէ գարնանացանը, արւած աշնա-

նացանքսի հետ համեմատած, պէտք է աւելի ընդարձակ չափերով անել, բայց ստոյգ ոչինչ չգիտենք, թէ ինքը աշնանացանը ինչ է տւել: Ոչ մի հաստատ տեղեկութիւն, թէ և ունենալը հընաբառը էր: Մինչև որ գիւղատնտեսական ցուցակազրումն ընկի, ոչ մի արժատական նշանակութիւն ունեցող ծրագիր՝ միծ յետաղայ աշխատանքների տէսակէտից, անհնար է մշակել: Ժողկոմների Խորհրդի առջն դրւած էր գիւղատնտեսական ցուցակազրումն հարցը և այդ բանը պէտք է անել մինչև դարուն: Հողերի վերաբաժանման մասին պիտի ասեմ, որ Համահայաստանին մասշտարով ոչինչ մնացուն անել չի կարելի, քանի գեր ազգաբնակութեան որոշ տարրեր գաղղթական վիճակում լինելու պատճառով զեր և զարժման մէջ են: Առաջիկա տարիների ընթացքում մեր երկրի տնտեսական հիմքը կազմող երեք գլխաւոր ճիւղերի՝ գինեղործութեան, բամբակագործութեան և հացանատիկների կուլտուրայի վերաբերմամբ մենք պէտք է խոր աշխատանք անենք, մինչև որ մնա կյաջողութ նրանցից ըստացող արդիւնքի քանակը հաւասարել նախապատերազմական չափերին: Այստեղ խօսքեր են եղել կուլտուրաների ազնւացման մասին . . . բայց զրա մասին խօսելը աւելորդ պիտի համարել: Պատերազմի նախօրեակին, սրանից 7—8 տարի առաջ գինեղործութիւնը այժմեան տերիտորիայի վրա տալիս էր 6 միլիոն բուրլի սոկով, բամբակագործութիւնը 7—8 միլիոն և ընդհանուր տեսդես ունէր հետզհետէ բարձրանալու, մինչդեռ հացանատիկների կուլտուրաների մշակութիւնը տարածման նշաններ ցոյց չէր տալիս: Հացանատիկների մշակումը, կարելի է մօտաւորապէս ասել, որ վերջին տարիների ընթացքում կատարել էր նախապատերազմական շրջանի հետ համեմատած 30—40 տոկոսի չափով, ոչ աւելի և այս պատճառով երկրի ներսում նկատում էր և գեր շարունակում է այդպէս մնալ հացի տագնապը: Անջրածեցութիւն է, որ մինչև Հայաստանի Խորհուրդների երկրորդ համագումարի հաւաքման միջնորդն՝ այսինքն մի տարի յետո, ցանքսերը այնչափ ինտեսիվ կերպով առաջ տարւեն, որ անվար ու չցոնւած չմնա ոչ մի գեսեատին հող (երկարատև ծափեր): Սա մեր հիմնական անելիքն է: Քինեզործութեան ասպարէզում գործը մի քիչ աւելի գժւարին է, որովհետեւ սա աւելի երկարատև ջանքերի արդիւքով կարող է վերտանդնել: Մեր անելիքը պիտի լինի առաջին տարւայ ընթացքում վերականգնել պատերազմից առաջ եղածի 50 տոկոսը և միայն 2—3 տարիների ընթացքում ձգտել հասնել 100 տոկոսին: Մինչև այժմ այս ուղղութեամբ կատարւած աշխատանքների արդիւքը ապացուցում է, որ զա հնարաւոր է: Բամբակագործութիւնը վերջին տարիների ընթացքում մեզանում խօսքառ վերացել է, որովհետեւ նախկին կառավարութեան այս կուլտուրայի վերաբեր

մամբ ունեցած ընթացքը կործանարար հետևանքներ ունեցաւ, մյու ուղղութեամբ մենք պէտք է հետևողական և հետզհետէ զարգացող գործունէութիւն ցուցահաննենք, որպէսզի հնարաւոր լինի նախկին չափերին հասնել: Խոկ սրա համար նորից պէտք ունենք 2—3 տարիների: Այս տեղ ուղղում եմ մի քանի խօսք ևս ասել ընկ. Զուբարի այն ցուցմունքի առթիւ, որ նա արաւ, ասելով թէ մեզանում հրատարակւած բոլոր պարենային հարցերին վերաբերող գեկրեաները ընդորինակումը կամ թարգմանութիւնն են Բոււսաստանում հրատարակւող գեկրեաների: Ես ինքս, որ մօտ մասնակցութիւն եմ ունեցել այդ աշխատանքներին պիտի ասեմ: — մենք մեր հրատարակած բոլոր գեկրեաները յարմարեցրել ենք տեղական պայմաններին, հիմնովին մշակելով: Այս մասին կարող են վկայել գաւառուց եկած պատգամաւորները: Ինչ վերաբերուում է այն բանին, թէ արդեօք պարենարկը յաջող է անցել մեզանում, պիտի ասեմ, որ առաւելագոյն չափով յաջող գանձումն ենք ունեցել պարենարկի բոլոր ճիւղերում: Հաւաքւած ամբողջ 150,000 փութ հացահատիկը մտսամբ արդէն վերազարձւել է և օգտագործւել ցանքսերի համար, իսկ միւս մասն էլ կզբագործւի գարնանը որպէս սերմացու: Գուցէ մարդիկ կան, որոնք կարծում են թէ գիւղացիութիւնից ընդհանրապէս հարկ չպիտի վերցնել: Մենք ապագայում մեզ ապահովելու համար անհրաժշտ կարիք ունենք, որ առաջիկա գարնանային ցանքսերը երեանի, էջմիածնի, Ալեքսանդրապոլիսի և Նոր-Բայազէտի գտաւաներում անպատճառ վերականգնենք ցանքսերի քանակը 25,000 գետիատին աւելացնելով: Սրանով մենք հնարաւորութիւն կունենանք արհաւերքին արհաւերքների ղեկազում մեզ որոշ չափ ապահով զգալ: Փոխադրական միջոցների մասին ընկ. Շահգետպէտանը ճիշտ նկատեց, բայց որ այժմ ստեղծւած կացութիւնը պիտութեանը ստիպում է այլ կերպ վարվել, քան ինքն է մտածում, զա միջոցների բացակայութեան հետևանք է և արւում է պիտութեան կամքից միանդամայն անկախ: Սակայն պէտք է ինչ գնով էլ որ լինի այստեղ ևս մի հաստատ վարքագիծ ունենալ և գիւղացուն ասել, որ նա որոշ ժամանակ պիտութեան համար պիտի աշխատի, որոշ ժամանակ էլ իւր զիւղացու անմիջական կարիքների համար, ունեւալով միջոց լծկաններին հանդիստ տալու: Դիւղացիք այս բանին համաձայն են, նրանք այս բանին են ձըգտում (ծտփեր):

Նախագ. — Թուրքերէն թարգմանելու համար, խօսքը պատկանում է ընկ. էֆէնդիկին (թարգմանում է թուրքերէն):

Նախագահ. — Ծնկ. խօսքը պատկանում է ընկ. Հ. Պողոսիանին:

Հ. Պողոսիան. — Ընկերներ անկուսակցական գիւղացիների կողմից ողջունում եմ Խորհրդային Հայաստանի առաջին համա

գումարը: Պէտք է ասեմ, որ մեր գիւղացիների առաջին պահանջը հողն է: Ընկեր զեկուցանողը շատ խօսեց հարթավայրերի մասին, բայց ոչինչ չասեց լեռնավայրերի մասին: Մեր հողերը լեռնային են և խնդրում ենք բաժանել Յ կատեգորիայի: Այս աշը մեր շրջանում (Ղաղախում) բերքը չափազանց վատ է, որա համար խնդրում ենք տալ սերմացու: Պէտք է ասեմ, որ մեր շրջանում մեղւարուծութիւնը մեծ արդիւնք է տալիս, ուստի խնդրում նմ ուշադրութիւն դարձնել այդ հանքամանքի վրա և աշխատել զարգացնել մեղւարուծութիւնը այդ շրջանում:

Նախազ.—Խօսքը պատկանում է ընկ. Կրիվցկուն:

Կրիվցկի.—(ոռւս զինուր) Ընկերներ, այստեղ հաւաքւած պատգամաւորների մեծ մասը գիւղացիներ են և նրանց մեծ մասմբ հետաքրքրում է հողը: Միք կարծի, որ տուն վերադառնաք հողը բաժանած կտնելու: Դա շատ գժւար բան է: Մի քանի տեղերում հարուստ են հողով, միւսում աղքատ: Դժւար է ճիշտ հողաբաժնութիւն կաարել, հոյնպէս և ինւենտարը: Օր. Լուսին Նիկոլական ունի փոցիւր, գութաններ, բայց հող չունի, հարեան զիւղը հակառակը, մի ուրիշ գիւղ ունի հող, անսառունակը չունի: Նման գէպերում եթէ գիւղացիները փոխադարձ օգնութեան գան միմիւյն երկարութական ինւենտարներով ու այլ միջոցներով, այդ գէպում, դրանով ցանքսերը կմեծացնենք, որից կօգուան թէ գիւղացիները և թէ կառավարութիւնը: Սովորութիւն է եղել ամեն ինչ կառավարութիւնից սպասել: Դա հին բան է, պէտք է թողնել:

Միւս հարցը սերմանման խնդիրն է: Հողգողկոմը առում է որ ինքը կունենա 200 հազար գութ սերմացու: Պէտք է յոյս դնել և օգտագործել ունեցած սերմապահեստը: Հողը լաւ բաժանելու համար հարկաւոր են գիւղատնտեսներ, այդ իսկապէս նրանց գործն է, և ոչ թէ խնձոր ուտելու նման բան է: Մինք զինուրականի պէս պէտք է գործենք և անմիջապէս գործի անցնենք:

Ընկ. Մեասնիկեանը խելօք մարդ է, նա այդ բանը հասկանում է, պէտք է հողերը խալոյն բաժանեն, որովհետեւ գարունը մեր քթի տակ է: Բաժանենք սերմերը մեր աչքերով, հալիւ անհնք տեղն ու տեղը գիւղացիներին հասկացնելով, որ այդ բոլոք նրա օգտին է:

Նախազ.—Խօսքը պատկանում է Արտ.

Ա. Յովիաննիսեան:—Ընկերներ հողային գործը մեր գիւղիցին համար մեծ գործ է: Նա սպասում է, որ Խորհրդային մշխանութիւնը հողը բաժանէ: Ընկ. զեկուցանողը հողի բաժանեան մասին մի գրական խօսք չտաց, ես առաջարկում նմ հո-

դաբաժանութիւնը լինի գործնական, գոնէ ժամանակաւորապէս, որին գիւղացիութիւնը սրտատրով սպասում է:

Գրիգորեան:—Ընկերներ հողի մասին շատ խօսեցին, պէտք է խօսել նոյսիչ ցանքսերի մասին, որը մեծ նշանակութիւն ունի: Պէտք է ասիլ, որ ազգաբնակութիւնը պահել է ցորեն և թէ գարե, բայց չէ ցանում: Պէտք է օգտագործեն այդ հացահատիկները: Պէտք է մի երկու խօսք ասեմ Զանգեզուրի մասին, որը քայլայւած է տնտեսապէս և զուրկ երկրագործական ամենաարբական դործիքներից: Զանգեզուրի աշխատաւորութիւնը թէն շատ աշխատունակ է, բայց զուրկ է միջոցներից, պէտք է նրան տալ գութան, բահ, արօր: Այսօր այդ աշխատաւորութիւնը հոդով ու սրտով Հայաստանի Խորհրդային իշխանութեան հետ է և նա պատրաստ է կարիքի բողեն օգնութեան ձեռք մեկնելու իւր բարեկամ Աղրբէջանի և Ռուսաստանի աշխատաւորութիւնը:

Նախազ.—Խօսքը պատկանում է Վարսենիկ Մատթէսսեանին:

Վ. Մատթէսսեան:—Ընկերներ, հողի հարցը մեծ հարց է: Մեր շրջանում (Ախտա) հողի շատ մեծ պակասութիւն կա և բոլորն էլ սպասում են որ հողը բաժանեի: Բացի այդ մեր կանանց միութիւնն էլ է ուզում հող ստանալ որոշէսի այդ հողը մշակի միութեան օգտին: Ուստի խնդրում են կառավարութեանը այդ դործում օգնել մեզ:

Նախազան:—Խօսքը պատկանում է ընկ. Զանօհանին (Եղիկ): (Նուրի Փոլլագը թարգմանում է սուսերէնով)

Ն. Փոլլագ.—Ընկերներ, այսօր Խորհրդային իշխանութեան օրօք մենք եղեգիներս, զգում ենք մեզ չափազանց ազատ: Մենք մինչև այժմ չունենք մի հաստատուն ընտելավայր և զուրկ ենք հողից: Մենք ես խնդրում անք տալ մեզ հող և բնակավայր:

Նախազան:—Խօսքը պատկանում է Ընկեր Մուսա Հիւսէին օղլուն:

Մուսա Հիւսէին օղլի:—Ընկերներ, յունւարի 30-ին երկանում բացուղ Համահայաստանեան առաջին համագումարին, Աղբաբայի շրջանի չբաւոր միւսուլմաների կողմից բերել եմ ջերմագին բարեներ:

Ընկերներ, ի հարկէ մենք պատգամաւորներ ենք ընտրւած մեր ժողովրդից: Մենք եկել ենք զանազան շրջաններից և ունինք առանձնայատուկ ցաւեր: Պէտք է այստեղ խօսել ընդհանուր ցաւերի մասին, բայց մենք կարծում ենք, որ ուրիշ շրջանների աշխատաւոր ժողովրդի ցաւերը ու կարիքները այնքան շատ և խոր չեն, որքան մեր, Աղբաբայի շրջանի: Աղբաբայի շրջանը լեռնային լինելով 7—8 ամիս ձմերալին եղանակ է ապրութ, Մեր աշխանի արտադրութիւնն է միայն ցորեն, զորի և կարտոֆիլ: Թէն մեր շրջանում կարելի է անասնապահութիւնը

զարգացնել, բայց այժմ անառունների թիւը կազմում է մէկ տասներորդ մասը անցեալի: Աղբաբայի 2—3 գիւղերի փախստականները արդէն վերադարձել են Պարսկաստանից, Տաճկաստանից և Աղբէջանից, որոնք դանուում են ծայր աստիճան չքառութեան մէջ:

Յուսալից ենք, որ Հայաստանի ներկա կառավարութիւնը օգնութեան կհասնի մեղ: Մեր շրջանի ժողովուրդը մնացել է մթութեան և տգիտութեան մէջ: Անհրաժեշտ է շրջան ուղարկել հայերենի սուսերէնի և տաճկերէնի դասաւուններ, բանալ արհետանոցներ—արհեստաւորներ էլ չկան մեր շրջանում:

Ի վերջո մենք ողջունելով այս համագումարը, սրտանց ողջունում ենք երախտագիտական գգացումով Հայաստանի ներկա կառավարութիւնը և Կոմունիստական կուսակցութիւնը:

Ընկ. Ազատեան.—Նախորդ ճառախօսները մոռացութեան տւին մի շատ կարևոր հանգամանք, այս՝ թէ գիւղացիական աշխատանքները տանելու ժամանակ ինչ մեթոդներով պէտք է առաջնորդուել—ղեկավարել մեր ընդզծած ծրագրնվ, թէ զուտ գործնական հողի վրա կանգնել: Ինչքան մեր երկրում իշխում է խորհրդային կառավարութիւնը, նա պարտաւոր է հոգալ չքաւորների կարիքները, նա չունեու գիւղացուն պիտի տայ անային կենդանիներ ու սերմացու՝ որպէսզի վերջինս կարողանայ բարւոքել իր գրութիւնը: Հայ գիւղացին երբ է ունեցել կատարելագործւած գործիքները, ցարի կառավարութեան ժամանակ այդ գործիքները ստացւում էին Գերմանիայից, Խուսաստանից, իսկ այժմ այդ ճանապարհները փակւել են: Դուք ասում եք հող տանը անհող գիւղացուն, բայց երբ նա զուրկ է անային կենդանիներից և գործիքներից, ինչպէս պիտի կարողանայ մշակել իր սաացած հողը: Պէտք է մտածել այս մասին:

Յուանց հացի մենք չենք կարող ապահովել մեր տնտեսութիւնը, բանւորը մինչեւ չուտիր, չի աշխատի. պէտք է ամեն միշտ գործ դնել՝ հողը ցանելու համար: Այստեղ անկուսակցական գիւղացիական ներկայացուցիչը ինդըրում էր, որ կառավարութիւնն այդ անի. գիւղացին չէ թէ պիտի խնդրի, այլ պահանջի կառավարութիւնից այդ բանը, որովհետեւ այս երկրի տէրը բանւորն ու գիւղացին են: Երբ տեղական ժողովուրդը իր ներթիւն տէր ինի իր իշխանութեանը, երբ նա իր սեփական միջոցներով կուր տեղական բառնցքների դէմ, այն ժամանակ նա յաջողութիւն կունենայ իր նողատակների մէջ: Այստեղ պիտի շեշտել մի բան. ինչքան էլ մենք դէմ լինենք առենատային սիստեմին, այսուամենայիւ, իբր ժամանակաւոր երեսյթ պիտի հաշտւենք նրա հետ՝ հաց ունենալու համար:

Այստեղ հարց բարձրացւեց, թէ կառավարութիւնը հող ժողովրդին: Ո՞րտեղից: Առանց հողային տնտեսութեան

զարգացման՝ հաց չի լինի: Հողը այստեղ առջիս է 50—100 տուկու իւրաքանչիւր դեսեատինին, իսկ մեղ հարկաւոր է 4—5 միլ. փութ հաց: Առաջ մենք հացի 40 տոկոսն ստանում էինք Հիւս, Կովկասից: Երբ հող չկայ գիւղացուն տալու համար, պէտք է բարձրացնել հողային կուլտուրան: Հողային հարցը չի կարելի ուժել՝ առանց տնտեսութեան ընդհ. հարցի լուծման: Մեր երկրում հողային տնտեսութիւնը կարող է զարգանալ միայն գործարանային արդիւնագործութեան զարգացմամբ: Մեր երկիրը չէ, որ պիտի տայ շատ արդիւնը՝ քան գործարանը. հողի տեսակն է մեղ ստիլայմ գործարանային արդիւնագործութեամբ զբաղւել: Հողեր կան ուր միայն կարելի ցանել և ոչ երբէք հացահատիկ: Հողժողկոմը նկատի պիտի ունենայ այս բոլոր հանգամանքները և նա կազ պիտի հաստատի Սովորխոցի հետ՝ գործարանային արդիւնագործութեան զարգացման համար:

Մի բանի խօսք ևս ընկ. Զուբարի ճառի մասին:

Կառավարութիւնն իր շինարար աշխատանքներն սկսեց ապրիլից: Մեր տարին եղած է աւելի սպասման՝ քան արգիւնագործութեան տարի: Եթէ ընկ. Զուբարը բաղդատէր ներկայ գրութիւնն անցեալի հետ, պիտի տեսնէլ, որ գրութիւնը շատ տարբեր է: Հին կառավարութեան օրով 220,000 փութ սերմացու հաւաքւեց, բայց հազիւ 20,000-ը արւեց գիւղացուն, մնացած 200,000 փութը վաճառւեց և մտաւ պ. մինիստրների տները: Թող մէկն այժմ ասի, որ մեր հաւաքած հացից մի փութ կորած է. այդ հացի 9 | 10-ը յատկացւած է սերմացուի: Պարենտուրքի հաւաքաման ժամանակ եղած պակասութիւնները չպիտի կապել պետական ապարատի հետ. դա արգիւնը է անցեալի: Մեր ժողովուրդը, մինչև մեր գալը, եղած է սարուկ, զուրկ սոցիալական մտածողութիւնից: Երբ ամբողջ գիւղը գիւղէ, որ այս ինչն ունի եղ, ոչ մէկը չի գիւղում զրա մասին: Եթէ բոլորներ եղած են պարենտուրքի գանձման մարմնի դէմ, զրանք եղած են միայն հարուստների կողմից: Ցարի կառավարութեան օրով հայ գիւղացին վճարում էր 8—9 րուբի տուրք, մինչդեռ այժմ հայդիւ 4—5 րուբլի տուրք է տակի գիւղացին: Առաջները յաճախ այդ բոլորով կուլակներն ընտրում էին գիւղի տանուտէր, այժմ այդ չկայ. չունեու գիւղացին այժմ պիտի զգայ, որ իր ամբողջ բարդութիւն է, ինչպէս և այս երկրի ապագան կազմակերպելու ամբողջ պատասխանաւութիւնը:

Ընկ. Երգելիքան.—Ընկերներ, իմ առաջ զրւած են մեծաքանակ հարցեր, որոնց կը պատասխանեմ հերթով: Նախ սկսում եմ վերջինից: Ընկեր Ազատեանը առաջարկում է աւելի շատ զարկ տալ գործարանային արդիւնագործութեանը: Մեր երկրի 90 տոկոսը կազմում է գիւղացիութիւնը: Մեր երկիրը, ճիշտ է հա-

բուստ է հանքերով և ապագայում դործարանային արդիւնագործութիւնը կարող է զարգանալ, բայց դա կլինի գուցէ 50 տարի յետո, եթե այլի ես և Ազատեանը չենք ապրի: Հետեւքար առայժմ մենք մեր ուշադրութիւնը պիտի կենտրոնացնենք հողային աշխատանքների վրա:

Ընկեր Զանօհանը եղդիների կողմից այստեղ մի յայտարարութիւն արեց: Խորհրդային իշխանութեան համար չկա եղիդի, թուրք, ասօրի, նրանք հող կտանան ինչպէս միւս աղջերը: Եղիդիները Դուրսուլութիւն շրջանում ստացել էին հող, բայց իրանք լինելով լինային ժողովուրդ չեին կարողացել ապրել այնտեղ: Ես կարգադրել եմ, որ նրանք Արագածի ստորոտում հող ստանան, միայն այն պայմանով, որ անասնապահութեան հետ մեկտեղ, հողագործութեամբ էլ զբավեն:

Ախտայի ներկայացուցիչ կին պատգամատորը իրենց շրջանի հողաբաժանման հարցը դրեց: Հողժողկոմը որոշ քայլել արել է այդ շրջանի հողաբաժանման համար, կարելով որոշ հողամասեր նախապէս ուսու գաղթականութեան յատկացւած հողերից: Այդ շրջանի համար կազմւած է նաև առանձին հողային յանձնախումբ:

Ղազախի ներկայացուցիչներ Պօղոսեանն ու Յարութիւնեանը զբին բալանելի խնդիրը: Թալանելները փոքրիկ հողային կը տորներ են, որոնք գտնում են անտառներում: Հողժողկոմը գտնում է, որ այդ հողաբաժինները չե կարելի տալ ժողովրդին, որովհետև մեր անտառները քիչ են և եթէ գիւղացին մի անգամ տեղաւորւի այդ թալանեներում, այլևս անտառները կը փշանան և կը վերածեն վարելանողերի:

Քոչի խնդիրը Ղազախում ամենահրատապ ինդիրն է: Ղազախցին, եթէ ուզում է իր հողը լայնացնել, պիտի լայնացնի գէպի արօտատեղիները: Ալդ ընդարձակ հողամասերը, որոնց տէրերն այժմ չունին նախկին անասունիքը, պիտի տալ Ղազախցոց: Հողժողկոմը միջոցներ է ձեռք տոել պարզելու հողերի քանակն այդ շրջանում: Քոչը մենք չենք կարող արգելու: Եթե թուրք աշխատաւորութիւնն անցնի աստիճանաբար ինտենսիւ կուլտուրայի, քոչը կը սահմանափակի: Անցեալ տարի եթէ Ղազախում ցանքսեր չեն տրւել, պատճառն այն է, որ Ծկաններ չեն եղել, ինչպէս և սկրմացու: միւս կողմից ազգաբնակչութիւնն զբաղւած է եղել քաղաքացիան կուլտուրով:

Մի քանի տաք խօսք ուզում եմ տոել ընկեր Զուրաբին: Ընդգծւած երկոյթ է և ծշգրւած փաստ, որ փաստաբանները կարծում են, որ աշխարհիս ամենամեծ գործը կտաքրում են իրանք: Մեր լուսեցին ասում են, որ եթէ Ասծուը մէկի տունը քանդի, նրա գործը կը նկնի փաստաբանին: Մեր երկոյթ գոյութիւնը չունին ժողովուրդ և կտաքարութիւն, նրանք իրար գէմ

կաւազ կողմեր չեն և Հողժողկոմը չե կարող փաստաբանի գերումը դրւու զալ ժողովրդի շահերի համար: Երբ կոմիսարիատում հարցեր են յարուցւում, դրանք բոլորն էլ վճռում են յօգուտ ժողովրդի և Հողժողկոմը այնտեղ չե կարող առանձին հարցեր յարուցն: Երբ վաղը, միւս օր հարց բարձրանա, որ մեր կարմիր բանակի համար անհրաժեշտ են հողամասեր եմ, որ մեր ժողովուրդը կտա ամենայն սիրով (ծափեր): Մենք պարենտուրքի 90 տոկոսն արգէն հաւաքել ենք: Ինչ, որ ստացել ենք ժողովրդի կուլակ դասակարգից, տալու ենք աշխատաւոր ժողովրդին: Որոնք որ զէմ են պարենտուրքի գանձմանը, նրանք պաշտպանում են կուլակների շահերը (ծափեր):

Պատասխանում եմ ընկ. Լուկաշինին: Մեր կառավարական ապարատները պակասաւոր լինելով՝ հարցութիւն չենք ունեցել կազմակերպելու մեր ստատիստիկան, բայց մենք կարելի եղած միջոցներն արգէն ձեռք տոել ենք այդ բանի համար և յոյս ունենք մի քանի ամիսներում կազմակերպելու: Գտալով ընկ. Լուկաշինի զրած հիմնական հարցերին, կարծում եմ, որ նա սխալում է: Ամենահիմնական հարցը ցանքսերի լայն կազմակերպումն է: Ի՞նչ է արւած այդ առթիւ և ի՞նչ գործնական ծըրագիրներ են կազմւած: Մենք արգէն 65,000 փութ սերմացու տեւել ենք աշխանացանքսի համար, որը վերջացաւ դեկտ. 15-ին: Այժմ պատրաստութիւններ նոր տեսնում գարնանացանքսի համար: Մենք մեր տրամադրութեան տակ ունինք 115,000 փութ սերմացու: Սխալ է ընկ. Կրիստեցիկին, որ առաջարկում է այդ սերմացուն չբաժանել, մինչև ստացւեն միւս սպասելիքները: Մնացածներն էլ կը բաժանենք ստանալուց յետոյ: Ուրեմն մեր կոնկրետ խնդիրն է գարնանացանքսը և սերմացուն: Մենք յոյս ունենք, որ սերմացուի բանակը կը հասցնենք 300,000 փթի, ցանքելով 25—30,000 գեսեատին, որն որ առաջարկում է ընկ. Լուկաշինը: Բամբակագործութեան շրջանում մենք ունենք ճրշգրիտ թւեր, մանաւանդ այգեգործութիւնը մեր երկում գոյութիւն չունի, բայց ես ձեր առջեւ դրի կոնկրետ կերպով այն բոլոր մի ջոցները, որոնք անհրաժեշտ են ազգաբնակութեան՝ բամբակագործութեան անցնելու: Մեր ազգաբնակչութիւնը կանցնի բամբակագործութեան այն ժամանակ՝ երբ բամբակի գինը կը բարձրանայ: Քանի ցորենն աւելի թանկ է բան բամբակը՝ բամբակագործութիւնը չի զարգանայ: Այգեգործութեան վերաբերեալ մենք ունենք նախապատերազմեան թւական տւեալներ: Մեր առաջ իրը գործնական խնդիր՝ դրւած է այգեգործութեան զարգացման խնդիրը: Մի քանի տարի է հարկաւոր՝ այգիներն իրենց նախկին վիճակին հասցնելու համար: Կառավարութիւնն արգէն 15 միլիարդ գող է տեւել այգիները թաղելու համար:

Հայաստիկների կուլտուրայի մասին մենք ունենք միայն նաև խաղաղերազմեան թւեր: Այսպահն՝ ստատիստիկական տեղեկութիւնների մասին:

Ես համաձայն եմ այն ընկերների հետ, որոնք կարծում են, որ այժմ ցանքսերի կազմակերպութեան ինդիրը ամենահարեւածայինն է: Հողժողկոմը պիտի ալժմից նախապարաստական աշխատանքներ կատարի այդ մասին: Կառավարութիւնն իր սուլմիջոցներից արդէն տրամադրած է որոշ գումար: Մնում է կեանքի մէջ իրագործելու միջոցների մասին մտածել: Եթէ տեղական ընկերները չօգնեն մեզ ար գործում, հողժողկոմը մինակ ոչինչ չի կարող անել: Պէտք է համագործարը հրահանգի բոլոր տեղական ընկերներն՝ այդ աշխատանքները կատարելու:

Հողաբաժանութեան խնդիրը լայն մասշտարով միերկու տարւայ ընթացքում լուծել անհնար է: Մեծ նուսաստանը դեռ չի կարողացել կատարել հողաբաժանումը, ուր մնաց մենք՝ մեր կիսատ-պոատ ապարատներով: Սակայն դա չի նշանակում, որ հողերը պիտի մնան առանց ցանքսի: Մասնակի հողաբաժանումը կատարել ենք մենք և կը կատարենք, բայց զբանք պիտի կը ենք ժամանակաւոր բնոյթ՝ մինչև ընդէ. հողաբաժանումը կատարի:

Ընկեր Շահգետգեանը մի շաբք ինդիրնորի հետ, նաև ծանրացաւ անասունների հիւանդութեան հարցի վրա. իբր թէ մենք ուշագրութիւն չենք դարձել այդ խնդրին: Ընկերը սիալ-ւում է: Լորին ամենամեծ ժանտախտի տեղն էր, մենք ուզարկեցինք այնտեղ մեր յանձնախմբերը կուելու ժանտախտի դէմ: Ինը անասնաբոյժներով 39,000 անասուն ենք պատւասել, իսկ դա մեծ գործ է: Հրահանգած ենք մեր ատրիադներին, որ աեց-նեն Ալէք-պոլ:

Ընկեր Ալիս (նախագահ). — Զեկուցումը վերջացաւ: Հողային հարցը ամենակարես հարցն է: Նախագահութիւնն առաջարկում է ընտրել մի յանձնախումբ՝ զբաղելու հողային հարցով և ըն-նելու այդ առթիւ մշակած բանաձեր:

Առաջարկն ընդունվում է և ընկ. Նահգեալգեանը նախագահութեան կողմից կարգում է հողային յանձնախմբի համար առաջարկած հետեւալ թեկնածուների անունները: —

Երգնկեան

Նահգեալգեան

Լույսեան

Տէր-Դաղարեան

Խորայէլ Թոխունց

Ընկ. Գուրգարեան. — Առաջարկում եմ ընկ. Երգնկեանի առունը հանել այդ ցուցակից, որովհետեւ նա, իբր հողժողկոմ, իրաւունք ունի առանց այն էլ մասնակցելու յանձնախմբի աշխատանքն:

Ընկ. Ալիս. — Ընկ. Երգնկեանն ընտրում է յանձնախմբի անդամ՝ իբր պատգամաւոր և ոչ իբր հողժողկոմ:

Յանձնախմբի ընտրութիւնը վաւերացւեց:

Ընկ. Ալիս. — Մոսկվայի բանւորա-գիւղացիական և կարմիր բանակայինների խորհուրդից կայ ողջոյնի հուագիր:

Ընկեր Շահգետգեանը կարդում է:

«Երևան, բանւորական, գիւղացիական և կարմիր զինւորների պատգամաւորների համահայկական համագումարին: —

Բանւորական, գիւղացիական և կարմիր բանակայինների պատգամաւորների Մոսկվայի խորհուրդը ջերմագին ողջունում է այսուհետեւ ազատ Հայաստանի բանւորներին և գիւղացիներին, որոնք տապալցին իմպերիալիստական լուծը, և հաւատ է յայտնում, որ խորհուրդների իշխանութեան աշխատաւոբութեան թափած արեան վրայով կը կառուցի անխորսակելի մի կտմուրչ, որով կանցկեան բանւորների և գիւղացիների ներկայացուցիչները Հայաստանի եղբայրների կողացած ձեռքերը սեղմելու համար: Կեցցէ խորհրդացին իշխանութիւնը: Կեցցէ պրոլետարիատի գիւղատուրան ամբողջ աշխարհում: Մոսկվայի խորհրդի պերգիգիում (Ժելտով):

Ընկ. Ալիս. — Թոյլ տէք նախագահութեան կողմից և ձեր անունից պատասխաննել Մոսկվայի գիւղացիների, բանւորների և կարմիր բանակայինների խորհուրդին: — Ընդունուում է:

Ընկերներ, այն ժամանակ, երբ մենք այսուղի խօսում ենք բանւորների և գիւղացիների կարիքների մասին, նրանք աշքները յառած այս խորհուրդին, սպասում են, թէ ինչ աշխատանք ենք կատարում: Մեր պարտքն է մեր առաջին խօսքն ուղղել այդ բանւորներին և գիւղացիներին: Այս առթիւ խօսք է տըրուում ընկ. Մակինցեանին:

Մակինցեան. — Առաջարկում եմ ընդունել հետեւալ դիմումը Հայաստանի բոլոր աշխատաւոր մասսաներին (կարդում է. ծափեր, ընդունուում է միաձայնութեամբ):

Նախագահով ընկ. Ալիս. — Ընկերներ, երէկ ընկ. Մեասնիկեանը ասաց, որ Հայաստանի բանւորա-գիւղացիական իշխանութեան նւաճումներից մէկն էլ այն է, որ կազողացել է հաշտւել իւր բոլոր հարեանների ու Տաճկաստանի հետ: Իսձ թւում է, թէ այս մեր համագումարը պէտք է ողջոյնի խօսք ասէ նաև Տաճկաստանի աշխատաւոր մասսաներին: Դիմումի նախագիծը կը կարդա ընկ. Ա. Պարագեօվեանը: — (Կարդում է, ծափեր, ընդունուում է միաձայնութեամբ):

Ընկ. Ալիս. — Այն ժամանակ, ելք այստեղ հաւաքւել են Հայաստանի ներկայացուցիչները և մեր երկրի ցաւերի մասին ենք մտածում, ընկ. Մեասնիկեանի երեկուա ձառից երկաց, որ կան մարդիկ, որոնք արտասահմանում նստած ուրիշ Հայաստա-

— 48 —

Նի մասին են մտածում ու երազում, և որ այսանդից կախած դաշնակցականները մաշում են իմպերիալիստների դռները։ Այսօր այստեղ հաւաքւած են Հայաստանի ժողովուրդների իսկական ներկայացուցիչները և նրանք բոլորին պէտք է ասեն, որ Հայաստանը գոյութիւն ունի և գրանով միենոյն ժամանակ վերջ դնի այս սուտ լուրերին, թէ Հայաստան գոյութիւն չունի։ Խօսքը պատկանում է լուսժողովը ընկ։ Մակնաշեանին։

Ընկ. Մանեցեան։ — Սոսաջարկում եմ հետեւեալ գիմումը ուղղել արտասահմանեան հայ աշխատաւոր մասսաներին։ (Կարգում է, ծափեր, ընդունուում է միաձայնութեամբ)։

Ընկ. Աւիս։ — Ընկերներ, իմ կարծիքով համագումարի ողաջոյնը պիտի ուղղի նաև մեր յեղափոխութիւնը ապահովող կարմեր հերոս բանակին։

Ընկ. Նայեան։ — (Կարգում է, ծափեր, ընդունուում է միաձայն)։

Ընկ. Հուսեյնով։ — Ընդունւած գիմումների հակիրճ բովանդակութիւնը տալիս է թուրքերէն լեզուի։

Վարդուշ։ — Ծինչն հրմա մենք կանայքս մութը տեղն ենք ապրել. կարմիր բանակը մեզ տւեց լուսաւորութիւն և ազատութիւն և զրա համար էլ բոլորս պէտք է աշխատենք, որ մեր էս հիմիկւա կարզերը հաստատ մնան։ Համա շատ մայրեր էս ամենը չնասկանալով իրենց աղերանց պահում են ու չեն ուզում որ նրանք կարմիր զինուրք գառնան։ Պէտք է աշխատենք հասկացնել բոլորին, որ որքան երկար լինի մեր կարմիր դինուրների թիւը, այնքան ամուր կլինի մեր թիկունքը։ (Կեցցէ, օվացիաներ, կոչեր՝ կեցցէ Արենլըի կինը)։

Աւիս։ — Կեցցէ կարմիր մեծ հերոս բանակը։

Թոյլ տւէք երրորդ նիստը համարել փակւուծ։

Նիստը փակւում է երեկոյեան ժամը 10-ին։

### Պ. Ա Խ Ս

Նիստը բացւում է չորեցաբթի, տուաւուեան ժամը 11-ին նախագահութեամբ ընկ. Սիմակի։

Նախագահ։ — Խորհուրդների համագումարի Դ. Նիստը յոյտարարում եմ բացւած։ Օրակարգի յաջորդ խնդիրը Պարմովկոսի գելուցումն է։ Խօսքը պատկանում է ընկ. Բւանեանին։

Եւանեան (պարմովկոմ)։ — Ընկերներ մեր ամենակարևոր հողագործական խնդիրն զուղընթաց երկրորդ տեղն է բանում պարենաւորման, հարցը. Սա վերցւած իր իսկական իմաստով ոչ այլ ինք քան հաշւառութիւն ունեցած պարենի և ծախւեւք նիւթերի։ Արաքանչիրը մեղանից առանձին վերցրած հաշւեւք է անում այդ բոլորը իր սեփական գրդանի տեսակէտից,



ՀՀ Ազգային գրադարան

NL0978490

11

11463